N 14/20
4k

12004

Մ· Տ· ԿԻԿԵՐՈՆԵԱՑ

# ԿԱՏՈՆ ԵՐԷՑ

# ԿԱՏՈՆ ԵՐԷՑ

ԿԱՄ ԹԷ

## ՎԱՍՆ ԾԵՐՈՒԹԵԱՆ

Ի ՎԻԷՆՆԱ

Ի ՎԱՆՍ Պ. ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

1843

8824-57

ԱՌ

ՄԵԾԱՐԳՈՅ ԵՒ ՄԵԾԱՊԱՏԻՒ

# ՏԷՐ ԱՐԻՍՏԱԿԷՍ

ՎԱՐԴԱՊԵՏ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԵՍԱՐՈՒ

ԱՌԱՋՆՈՐԴ

ՀԱՄՕՐԷՆ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՎԻԷՆՆԱՅԻՈՅ

ՅԱՒՈՒՐ ՏՕՆԻ ԱՆՈՒԱՆ

ՈՐ Ի ԱԺ ՀՐՈՏԻՑ ԱՄՍԵԱՆ

ՔԵԶ ԹԱՐԹԱՌԻ ՏՈՒՂՂԻ· ՄԵԾԱՐԵԱԼ ԾԵՐՈՒՆԻ·

ՔԵԶ Ի ՏԻԲԵՐԱԿԱՆ ԱՓԱՆՑ ՀԻՒՊԱՏՍ ԶԱՅԴ ՄԱՏԵԱՆ ՅՂԵՄ·
Ո ԻՑԷ ՈՐ ԺՊՐՀԵԱԼ ԲՈՒՌՆ ՀԱՐԿԱՆԻՑԷ ՄԵՂՈՒԱՑ ԶՊԱՅՄԱՆ
ՃԱՐՏԱՐՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԱՆԵԼ ԶԾԱՂԿԱՀԱՄ ՄԵՂԻՐՆ ԳՈՐԾԵԼՈՅ·
ԳԻՏԵՄ ԵՒ ԵՍ· ԱՅՂ ՈՉ ԵԹԷ ԻԲՐԵՒ ԱՌԱԿ ԻՆՉ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՅՂԵՑԻ· ԱՅՂ ՔՈՅ ԿԵՆԱՑ ՀԱՅԵԼԻ· ԶԻ ՆՇՄԱՐԵԱԼ ԾԱՆԻՑԵՍ
ԱՆԱՐԱՏ ՔԵԶԻՆ ՔՈՅԻՆ ԱՉԱՒՔ ԶՔՈ ԱՆՁՆ· ՀԱՅՐ·

# Մ. Տ. ԿԻԿԵՐՈՆԵԱՅ

# ԿԱՏՈՆ ԵՐԷՑ

ԿԱՄ ԹԷ

# ՎԱՍՆ ԾԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌ

## Տ. ՊՈՄՊՈՆԻՈՍ ԱՏՏԻԿՈՍ

### Ա

ՈՎ ՏԻՏՈՍ, ԵԹԷ ԵՂԷՑ ԻՆՉ ԵՍ ԱՒԳՆԱԿԱՆ ԵՒ ԶՀՈԳՍ ՔՈ ՓԱՐԱՏԵ-
ՑԻՑ Ի ԲԱՑ,
ՈՐ ՏԱԳՆԱՊԵԱՆ ԶՔԵԶ ԱՅԺՄԻԿ, ԵՒ ԿԱՆ Ի ՄԻՏՍ ՔՈ ՀԱՍՏԱՏԵԱԼ,
ԶԻ՞ՆՉ ՎԱՐՁՔ ՏԱՑԻՆ ԻՆՉ.

*Քանզի զայն բանս արժան է ինձ զքէն ձայնել, Ատտիկէ,*
*զոր զՓղամինինեայ ձայնիցէ*
ԱՅՐՆ ԱՅՆ,[Ա] ՈՐ ՈՉ ՄԵԾ ԻՆՉ ԱՐԴԵԱՄԲՔՆ Է, ԱՅԼ ԼԻ ՀԱՒԱՏՈՎՔՆ
*Թէպէտ եւ ճարտար գիտեմ թէ ոչ իբրեւ զՓղամինինոս*
ԱՅՆՊԷՍ ՀՈԳԱՍ ԴՈՒ ԵՒ ՇԱՏԱՄՏԻՍ, ՏԻՏՈՍ, ԶՑԱՅԳ ԵՒ ԶՑԵՐԵԿ,

*Քանզի ծանեայ զզգաստութիւն մտաց քոց եւ զսրբութիւն, եւ ի միտ առի, թէ դու ոչ միայն զանուն յորջորջանացն ի քաղաքէ անտի Աթենացւոց բարձեալ բերեր, այլ եւ զմարդասիրութիւնդ եւ զիմաստութիւնդ. սակայն ինձ թուի թէ որովք իրօք երբեմն ես, նոքիմբք եւ դու անհնարին ծանրացեալ յուզիցիս, որոց մխիթարութիւնն եւս մեծ է եւ յայլ ինչ ժամանակ ի դէպ է յապաղել: Իսկ ինձ այժմիկ հաճոյ թուեցաւ գրել ինձ առ քեզ զծերութենէ:*

*Զի ի բեռանց անտի եկելոյ հասելոյ ծերութեանըն եւ կամ մօտելոյ, որք եւ ինձ եւ քեզ հասարակաց են, կամիմ եւ զքեզ եւ զիս իսկ թեթեւացուցա-*

նել ։ Թէպէտ և գիտեմ ճշմարտիւ թէ այսմ չափով և իմաստութեամբ, որպէս և ամենայնի իսկ և բնաւի, տանիս և տանելոց ես ։ Այլ իբրև զծերութենէ կամէի գրել ինչ, դու երևեցար ինձ արժանի այսմ պարգևի, զոր և երկոքին առ հասարակ արկանիցեմք ի կիր ։ Ինձ այնպէս հեշտական այսց գրոց մատենագրութիւնն թուե-ցաւ, զի ոչ միայն զամենայն հոգս ծանրատաղտուկ ծերու-թեանն ի բաց պարզեաց, այլ և զիւրին ևս և հեշ-տական զծերութիւն յարդարեաց ։ Արդ ուրեմն չէ մարթ արժանապէս փիլիսոփայութեանն գովել, որում թէ հաւանեալ անսայցէ ոք, զամենայն ժամանակս կենացն կարիցէ առանց նեղութեան անցուցանել ։

Բայց զայլոց իրաց բազում ինչ ճառեցաք և ճա-ռեսցուք բազում անգամ ։ Զայս մատեան զծերութենէ առ քեզ յղեցաք ։ Եւ զճառսն ամենայն ոչ Տիթոնեայ մատուցաք, որպէս Արիստոն Քիացի, զի մի առակաւ ինչ ճոխութիւն լիցէ յառասպելին. այլ Մ. Կատոնի ծերոյ, զի մեծ ևս իմն ճոխութիւն բանն ունիցի ։ Առ որում զԼէ-լիոս և զՍկիպիոն զարմացօղս արարաք, զի զիւրին իմն ծերութեանն տանէր, և զնա նոցա պատասխանի տուեալ ։ Որ թէ ուսեալագոյնս երևիցի վիճել, քան զոր ինքն յիւր գիրսն սովոր էր վիճել, յունական գրութեանն զբեաջեր, զի յայտ է թէ ի ծերութեանն զայնու զայր փութով յօժարութեամբ ։ Այլ զի՞նչ պէտք բազում բանից իցեն, զի և Կատոնի իսկ բանն յայտ առնիցէ զմեր զամենայն վասն ծերութեան միտս ։

Բ.

ՍԿԻՊԻՈՆ. Սովոր իսկ եմ բազում անգամ Կ. Գ Լելիոսիւ համդերձ զարմանալ ընդ քո առաւել և կատարեալ իմաս-տութիւնդ յայլ ևս ամենայն իրս, Մարկէ Կատոն, մա-նաւանդ առաւել զի իմանամ, թէ չէ ինչ քեզ ծանր ծերութիւն, որ ծերոց բազմաց այնպէս ատելի է, զի քան զԷտնայ ևս ծանրագոյն բեռն ասեն թէ բառնամք ։

ԿԱՏՈՆ. Ինձ թուի, թէ ոչ ընդ կարի ինչ դժուա-րին իրս զարմացեալ էք դուք, Սկիպիոն և Լէլի ։ Զի որոց չէք ինչ յանձինս պատրաստութիւն առ բարւոք և

երանելի կեանս, նոցա ամենայն հաճոյք ծանր են, իսկ որ զինու բարութիւնս յանձանց ունիցին, նոցա չէ մարթ թէ չար ինչ թուիցի՝ զոր բնութեանն հարկ ի վերայ ածիցէ։ Որոց սակի նախ ծերութիւնն է, որում ամենեքեան ցանկան թէ հասանիցեն, եւ իբրեւ հասանեն, մեղադիր իմն լինին. այսչափ ինչ խարխուլ եւ կամակոր միտք են անմտութեանն։ Վաղագոյն, ասեն, քան զոր կարծէաքն եհաս՞։ Նախ ո՞ նեղէաց զնոսա վրիպական կարծիս ի մտի դնել։ Իսկ արդ զիա՞րդ. միթէ ծերութիւն փաղ քան զերիտասարդութի՞ւն եհաս եւ քան զմանկութիւն երիտասարդութի՞ւն։ Երկրորդ անգամ. զիա՞րդ իցէ եթէ թեթեւագոյն իցէ նոցա ծերութիւն թէ ութհարիւրամենից լինիցին, եւ ոչ ութսնամենից։ Քանզի անցեալ զառանցեալ հասակն թէպէտ եւ երկայն եւս իցէ, յորժամ սահիցի եւ անցանիցէ, ոչ իւիք մխիթարութեամբ կարիցէ զանմիտ ծերութիւնն սփոփել։

Վասն որոյ եթէ ընդ իմաստութիւն իմ սովոր իցէք զարմանալ, որ երանի թէ արժանի ըստ ձերոց կարծեացն եւ ըստ մերում անուանն էր. այնու իմաստունք եմք, զի զբնութեան զճարտար առաջնորդին, իբրեւ զդից՝ զհետ երթամք, եւ նմա կամք ի հնազանդութեան։ Եւ չէ ինչ նման ճշմարտութեան, թէ յորմէ այլ բաժինք հասակացն բարւոք կարգեալն եւ նկարեալ իցեն, հուսկ վերջին գործն՝ իբրեւ յանպիտան գուեալ անփոյթ լեալ իցէ։ Բայց սակայն հարկ է զի իցէ վերջին ինչ, որպէս ի ծառոցն միրգս եւ յարմտիս երկրի, հասուն կանխութեամբն իբրեւ զփտիս եւ զվաղահասուկս, զոր պարտ է իմաստնոյ հանդարտութեամբ տանել։ Քանզի զի՞նչ այլ ինչ իցէ, ըստ սկայից օրինակի ի մարտ պատերազմի ընդ դիսն բախել՞, թէ ոչ ընդ բնութեանն ոգորել։

ԼԵԼԻՈՍ. Բայց արդ լաւ եւ բարւոք է մեզ, Կատոն, զի եւ զՍկիպիոնեայ խոստացայց, քանզի ակն ունիմք եւ կամիմք իսկ ընդ ծերանալ, եթէ կանխաւ ուսանիմք ի քէն զկարգան՝ որովք ծանրացեալ ամացն համբերել կարիցեմք։

ԿԱՏՈՆ. Արարից, Լելի, մանաւանդ եթէ ձեզ երկոցունցդ, որպէս ասեսդ, հաճոյ լինելոց իցէ։

ՍԿԻՊԻՈՆ. Կամիմք քաջ, թէ ոչ ծանր ինչ եւ տաղտուկ իցէ, Կատոն, զի իբրեւ ճանապարհ ինչ երկայն ի

դլուխ հանեն, ընդ որ եւ մեզ հասանէ գնալ, զայն՝ յոր դուն հասեր, ուսանել, թէ որպիսի ինչ իցէ:

Գ.

ԿԱՏՈՆ. Արարից, որչափ ձեռնհաս իցեմ, Լելի: Քանզի բազում անգամ ի մէջ զուգակնաց իմոց տրտունջ եղեալ, եւ ես անդէն մօտ էի, զի ըստ հին առասպելին հաւասարք առ հաւասարս դիւրաւ գումարին, զի Կ. Սաղինատոր, եւ Սպուրիոն Աղբինոս, որք երբեմն բդեշխքըն լեալ էին, եւ գրեթէ մեր զուգակիցք էին, սովոր էին աշխարել, թէ ի հեշտականութենէ անկանիցին, եւ առանց այնր չհամարիցին զկեանսն կեանս, եւ թէ արհամարհիցին ի նոցանէ՝ յորոց մեծարէինն: Ինձ այսպէս թուի թէ սոքա ոչ այնմ մեղ դնիցեն, որում բիծն պարտ իցէ դնել: Զի եթէ ի ծերութենէ ինչ այն դիպէր, նոյն անցք եւ ընդ իս անցանէին, եւ ընդ այլ եւս ծերս ամենեսին, յորոց զբազմաց ի նոցանէ զծերութիւն առանց տրտնջելոյ գիտեմ, որք զքակել ցանկութեանն կապանաց ոչ ծանր ինչ համարեցան, եւ ոչ յիւրեանց սեպհականաց անտի խոտեցան: Այլ ամենայն այդպիսի տրտնջմանց մեղադրութիւն ի բարսն է, եւ ոչ ի տիսն: Քանզի ցածուն ծերքն, եւ ոչ չարաբարոյք եւ ամարդիկք՝ անտաղտուկ ծերութեան կեանս կեան: Իսկ թախանձութիւն յամենայն հասակի ծանր եւ տաղտկալի է:

ԼԵԼԻՈՍ. Է իսկ այնպէս որպէս ասես, Կատոն. բայց թերեւս ասիցէ ոք, քեզ վասն մեծութեանդ եւ ընչից յաճախութեան եւ պատուոյ ժուժալի ծերութիւնն թուիցի. այլ այն չէ մարթ, թէ ամենեցուն դէպ լինիցի:

ԿԱՏՈՆ. Է իսկ ինչ այդ, Լելի, այլ ոչ եթէ ամենայն ինչ աստէն ի սմին կայցէ, որպէս զԹեմիստոկլեայ վէպի, թէ Սերիփիոսի ումեմն ի վիճելն ետ պատասխանի, յորժամ նոյն ասէր, թէ ոչ քո ինչ, այլ աշխարհին փառօք պայծառացեալ ես: Ոչ ես, ասէ, թէ Սերիփիոս էի, անուանարկ լինէի, բայց եւ ոչ դու թէ աթենացի էիր, փառաւոր երբեք էիր: Զոր նոյնգունակ եւ զծերութենէ մարթ է ասել: Զի եւ ոչ ի կարօտութեան յետին տնանկութեան մարթի ծերութեան թեթեւանալ,

*եւ ոչ խմառանոյն խոկ. եւ ոչ անմոլին յանհնարին տատա-տութեանն ցածնուլ:*

*Գեղեցիկ զէն եւ զարդ են ծերութեանն, Սկիպիոն եւ Գեղի, հանդամանք արուեստից եւ փորձք առաքինու-թեանց, որ յամենայն հասակի եւ ի բնաւ տիս ի հանդիսի անցեալ, յորժամ շատ կեցցես, սքանչելի վայելչութիւն եւ առհմնական բերիցեն, ոչ միայն զի չդադարենն երբեք եւ ի վերջին ժամանակի հասակայն. թէպէտ եւ այն մեծ իմն է, այլ զի եւ խրադէտ զխտութիւն կենաց բարեաց եւ բազմաց բարեաց գործոց յիշատակք քաղցր եւ հեշտական են:*

Գ.

*Նա մինչդեռ երիտասարդն խոկ էի, զՔ. Մաքսիմոս ծեր, զայն որ զՏարենտացւոց քաղաքն առ, իբրեւ զհա-սակակից այնպէս սիրէի: Քանզի էր յառնն յայնմիկ զա-ծութիւն խառն ընդ հեզութեան, եւ ոչ ծերութեանն փո-խեալ էր զբարսն: Թէպէտ եւ յորժամ սկսայն կալ նմա ի սպասու, չէր այնպէս ծեր, բայց սակայն յառաջադէմ էր հասակաւ: Զի յետ միոյ տարեւոր ժամանակի իմոյ ծննդեանն զառաջինն բդեշխ եկաց, եւ նովաւ հանդերձ յորժամ չորրորդ անգամ բդեշխն կացեալ էր, չքայ ի Կապուա, եւ զօրական մանուկ էի, եւ յետ ամաց հնգից ի Տարենտացւոց քաղաքն, յետ չորից ամաց կացի կա-պարճակիր. զայն իշխանութիւն ունէի ի ժամանակի զի Տուդիտանոս եւ Կեթեգոս բդեշխք կային, մինչ դեռ նա ծերացեալ յայժ կինկեան օրինացն որ վասն պարգեւաց եւ պատարագաց էին, հաւանեցուցանէր անսալ: Սա եւ զպատերազմունսն հարկանէր իբրեւ զերիտասարդ ի ծե-րութեան, եւ զՀաննիբաղ, որ իբրեւ զմանուկ պարծէր, խրով համբերութեամբ ցածուցանէր. զորմէ պայծառա-գոյնս ընտանին մեր Եննիոս:*

ՄԻ ՈՔ Է ՈՐ ՑԱՊԱՂԽԵԼՈՎՆ ԴԱՐՁՈՑՑ ՄԵԶ ԱՅՍՐԻՆ ԶՑԵՐՈՒԹԻՒՆ·
ՔԱՆԶԻ ՈՉ ԶՀԱՄԲԱՒՍ ՆԱԽԱՄԵԾԱՐ ՔԱՆ ԶՓՐԿՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՐԷՐ·
ԱՐԴ ԱԹԱԽԵՍԱԴՈՑՆ ԳԱՑԾԱԹԱՆԱՑ ՄԵԾԱՇՈՒՔ ՓԱԹԱԽՈՐՈՒԹԻՒՆ ԱԹՆՆ·

*Իսկ զՏարենտացւոց քաղաքն որո՞վ սքանչութեամբ, որո՞վ խորհրդեամբ առ. յորժամ ինձ լու ի լու, զՍա-*

զՍալինատոր՝ որ թողեալ ի բաց զքաղաքն, փախստական յամուրն անկանէր, որ պարծէրն եւ ասէր այսպէս, թէ Յիմ ձեռն, Կ. Փաբի, առեր զՏարենտացւոց քաղաքս: Այո՛, ասէ ծիծաղեալ, զի եթէ քո չէր կորուսեալ, չառնոյի իսկ երբէք: Եւ ոչ ազնուագոյն ինչ ի զէնսն, քան ի պատիւսն գտանէր, որ յորժամ երկրորդ անգամ բդեշխն կայր, ի վճարել Սպ. Կարուիլեայ ընկերի իւրոյ ի կենաց, Կ. Փղամինիոսի ռամկապետի հակառակ եկաց, որչափ ձեռնհաս եղեւ, որ զգեղն Պիկենդէս եւ զԳաղղիկոս առն առն հակառակ իշխանութեան ծերակուտին բաժանէր: Եւ յորժամ իղձն եկաց, իշխեաց ասել, թէ բարւոք բղձութիւնք՝ լինէին այնր ամենայնի որ վասն փրկութեան քաղաքին գործէին, իսկ որ ինչ հակառակ քաղաքին լինիցի, հակառակ բղձութեանցն են:

Բազում ինչ զարմանալիս գիտեմ զառնն այնորիկ. բայց չէք ինչ սքանչելագոյն քան զայն թէ զիարդ նա մահու Մարկոսի որդւոյ իւրոյ համբերէր, առնն փառաւորի եւ եղելոյ բդեշխի: Կայ առ ձեռս եւ գովութիւնն, զոր թէ ընթեռնուցումք, զո՞ ոք ի փիլիսոփայից չարհամարհիցեմք: Եւ ոչ արտաքոյ միայն, եւ յաչս իւրոց քաղաքացեացն մեծարոյ էր նա, այլ ի ներքս եւս եւ առտնին ազնուագոյն երեւէր: Որ բան, զի՞նչ հրամանք, ո՜րչափ գիտութիւն կանխութեան, որպիսի՞ տեղեկութիւն իրաւանց բղձութեանցն, եւ բազում եւս դպրութիւնք իբրեւ առն հռովմայեցւոյ: Զամենայն յուշ ունէր, ոչ միայն զներքին պատերազմունսն, այլ եւ զարտաքինս: Յորոյ բանսն այնպէս ախորժելով վայելէի յայնժամ, որպէս թէ յառաջագոյն իմանայցեմ զայն որ ի գլուխ ել, թէ յետ նորա վախճանելն չգուցէ ոք, ուստի ուսանիցիմ:

Ե

Եւ արդ հէ՞ր զայս ամենայն զՄաքսիմոսէ յաճախիցեմ. քանզի տեսանէք իսկ թէ չէ արժան ասել, եթէ ողորմ եւ եղուկ է այնպիսի ծերութիւն: Սակայն չէ մարթ թէ ամենեքին Սկիպիոնք լինին կամ Մաքսիմոսք. զի զքաղաքաց զմանել վկանդել, զի զհետեւակ կռուոն եւ զնաւամարտիկ ճակատսն, զի զպատերազմունսն զոր

մղեցին, եւ զձայնել յիշեսցեն։ Կայ եւ հանդարտեալ եւ սրբութեամբ եւ խնամոտութեամբ անցելոց աւուց հասակաց խաղաղ եւ հանդարտ ծերութիւն, որպիսի ինչ Պղատոնին էր, որ ութսուն եւ մի ամաց գիրս եդ եւ մեռաւ։ Որպիսի ինչ եւ Իսոկրատեայն որ զմատեանն՝ զոր Պանաթենայիկոս կոչեն, յիննսներորդ չորրորդ ամաց հասակին ասեն թէ գրեաց, եւ յետ այնորիկ եկեաց հնգամեայ ժամանակ. որոյ վարդապետ Լեւոնտինոս Գորգի զհարեւր եւ զեւթն ամս ի գլուխ հան, եւ ոչ ի փութոյ անտի ի ուժէ եւ ի գործոյ երբեք դադարեաց։ Իբրեւ հարցանէր նա յումեքէ թէ ընդէ՞ր կամ վասն է՞ր երկար կամիցի այնչափ երկայնակեաց լինել, Չունիմ, ասէ, ինչ, զի մեղադիր ծերութեանն լինիցիմ։ Գեղեցիկ պատասխանի եւ արժանի առն իմաստնոյ։

Քանզի անմիտք զանձանց չարիս եւ զիւրեանց յանցանս ի ծերութիւն անդր կրթեն, զոր չառնէր, զում այժմիկ յիշատակեցի, Էննիոս։

ՈՐՊԷՍ ԶՈՒԺԳՆԱԳՈՅՆ ԵՐԻՎԱՐ ՈՐ ԲԱԶՈՒՄ ԱՆԳԱՄ ՅԱՍՊԱՐԻԶԻՆ ԳԻՆԵԱԼ,
ՅԱՂԹԻՑԷ ԸՄԲՇԱԿԱՆ ՄՐՑՈՒԹԵԱՆՑ, ԱՅՆՊԷՍ ԱՅԺՄ Ի ԾԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՍԵԱԼ ՀԱՆԳՉԻ։

Զօր եւ յաղթող երիվարի ծերութեան զիւր ծերութիւնն համեմատէ, զոր եւ կարէք իսկ քաջ յիշատակել։ Քանզի յիննեւտասներորդում ամի յետ նորա մահուն, Տ. Փղամինինոս եւ Մ. Ակիլեոս բդեշխք կացին. իսկ նա ի Կեպիոնի բդեշխութեանն եւ ի Փիլիպեայ յերկրորդումն վախճանեցաւ. մինչդեռ ես Կ եւ Ե ամաց մեծաձայն բարբառով եւ սաստկութեամբ բան վոկոնեան օրինացն զիրաւունսն վճարէի։ Իսկ եւթանասնամենի, քանզի եւթանասուն ամ եկեաց Էննիոս, այնպէս տարաւ երկուց՝ որ սաստիկ բեռինքն կարծին, աղքատութեան եւ ծերութեան, զի նոքիմբք ուրախ լինել կարծեցուցանէր։

Բայց քանզի յորժամ միտ եդեալ հայեցեմ, չորս բարուրս գտանեմ, յոր սակս եղուկ կարծիցի ծերութիւն. նախ զի ի գործոց խափանիցէ. երկրորդ անդամ զի զմարմին տկարագոյն գործիցէ. երրորդ՝ զի գրեթէ յամենայն ցանկութեանց զրկիցէ. չորրորդ՝ զի չէցէ հեռի ի մահուանէ։ Թէ հաճոյ թուեսցի զխնդրեսցուք տեսցուք եթէ,

*որչափ եւ քանի արդարք եւ իրաւացիք արդեւք մի մի իւրաքանչիւր ի պատճառաց անտի իցեն:*

## Զ.

*Ի գործոց, ասեն, դադարեցուցանէ. յորո՞ց գործոց. յայնցանէ՞ ինչ արդեւք, որ ի մանկութեանն եւ ի զօրութեան գործիցին: Իսկ արդ չգո՞ն ինչ իրք ծերոց, որք թէպէտ եւ ոկար մարմնովք ոչ, սակայն մտօք մատակարարեսցին: Արդ Կ. Մաքսիմոս ինչ ո՞չ գործէր. ո՞չ եւ Գ. Պաւղոս հայր քո, Սկիպիոն, աներ որդւոյ իմոյ առնն քաջի. եւ այլ եւս ծերքն, Փաբրիկիոս եւ Կուրիոս եւ Կորունկանիոս, մինչդեռ խորհրդով եւ ճոխութեամբ՝ քաղաքին պաշտպանէին, գործ ինչ ո՞չ վճարէին:*

*ՅԱպպեայ Կղաւդեայ ծերութեանն վերայ եւ այն եւս յաւելոյր, զի կոյր էր. սակայն սա, յորժամ ծերակուտին միտք ի խաղաղութիւն հակէին եւ ի կռել դաշինս ընդ Պիւռեայ, ասաց զայն՝ զոր Էննիոս գրէ,*

ՄԻՏՔ ՁԵՐ, ՈՐ ՑԱՌԱՋ ՔԱՆ ԶԱՅՍ ՍՈՎՈՐՆ ԷԻՆ
ՈՒՂՂՈՐԴ ԿԱԼ, ՑԱԿԱՍՏԱՆԻ, ՅՈՐ ԿՈՅՍ ԹԻՒՐԵԱԼ ԽՈՏՈՐԵՑԱՆ.

*եւ այլ ինչ եւս սաստիկ, քանզի ծանօթ իսկ ձեզ երգն է. սակայն Ապպիոսի իսկ ճառք կան: Այլ զայն նա եւթնեւտասն ամօք յետոյ քան զերկրորդ բդեշխութիւնն արար, մինչ ի մէջ երկուց բդեշխութեանց տասն ամք ի միջի անցեալ էին, եւ համարակար եւս յառաջ քան զառաջին բդեշխութիւնն լեալ էր: Ուստի յայտ առնի թէ առ Պիւռեայ կռուովն ծերացեալ էր հասակաւ. եւ այսպէս իսկ ի հարց ընկալաք:*

*Արդ չբերեն ինչ ի մէջ, որ չառնուն յանձն թէ ծերութիւն ընդ գործ ինչ գայցէ. եւ նոցա նման են, որք զնաւավարէ ի նաւարկելն ասիցեն, թէ ոչ մի ինչ գործ գործէ. մինչ այլք ընդ կայմն ելանեն, այլք ընդ տախտակամած յատակն ընթանան, կէսք զջուր մխոցաւ հանեն. իսկ նա զսամին ուղղիչ նաւին ի ձեռն առեալ ի խելն նաւին նստի հանդարտիկ. չառնիցէ զայն զոր պատանիքն գործիցեն, այլ մեծամեծս յոյժ եւ ազնուագոյնս գործիցէ: Ոչ զօրութեամբք կամ երագութեամբք կամ սաստ-*

*կութեամբք մարմնոյ մեծ ինչ իրք վճարիցին, այլ խորհրդով եւ իմաստութեամբ, յորոց ոչ միայն չէ սովոր վրիպել ծերութիւն, այլ եւ յաճախէ եւս նոքիմբք:*

*Այս թէ ոչ՝ ես որ եւ ի զինուորութեան եւ ի հազարապետութեան, եւ ի հրեշտակութեան, եւ ի բդեշխութեան համակ ի պէսպէս պատերազմունս շրջեցայ, դուցէ թուիցիմ ձեզ, թէ այժմիկ դադարեալ իցեմ, որովհետեւ չհարկանեմ պատերազմունս: Այլ ծերակուտին՝ որ ինչ իրք գործելոց իցեն եւ զիարդ, յառաջագոյն կարգեմ եւ յօրինեմ: Կարքեդոնացւոց քաղաքին՝ որ հանապազ չարիս խորհի, յառաջագոյն պատերազմ յայտ առնեմ ի քաղաքէ անտի զանգիտել. եւ չդադարիցիմ մինչ չեւ իցեմ դիտացեալ թէ քանդեցաւ:*

*Երանի թէ քեզ Սկիպիոն զյաղթութիւնն պահեալ էր անմահ դիցն, զի զոր հաւուդ քո թողեալ իցէ. զայն դու ի գլուխ հանիցես. ի մահուանէ նորա այս երեսներորդ ամ է. այլ զյիշատակ առնն այնորիկ ամենայն ամք՝ որ զկնի դայցեն, առցեն փոխանակաւ: Մեռաւ ամաւ յառաջ քան զիմ համարակարն լինել, մեռաւ, ինն ամօք յետոյ քան զիմ բդեշխութիւնս. յորժամ բդեշխն եկաց երկրորդ անգամ, մինչդեռ ես բդեշխ էի:*

*Արդ եթէ ցհարիւրորդ ամն կեցեալ էր, ապաշխարէ՞ր ինչ ընդ ծերութիւն իւր: Քանզի ոչ արշաւանաւ եւ ոչ փաղեւք, եւ ոչ ի հեռաստանէ տիգօք եւ գեղարդեամբք, կամ ի մօտոյ սուսերօք փարէր, այլ խորհրդով, բանիւ եւ մտօք: Թէ սոքա ի ծերսն չէին, ոչ զգլխաւոր խորհրդականութիւնն մեր աւագք ծերակոյտ կոչէին:*

*Եւ ի Ղակեդեմոնացւոց եւս, որ զմեծ իշխանութիւնն ունիցին, նոյնպէս ծերք կոչին, որպէս եւ ենն իսկ: Եւ եթէ կամիցիք ընթեռնուլ կամ լսել զարտաքնոց, գտանիցէք զի քաղաքք մեծամեծք յերիտասարդաց կործանեցան եւ ի ծերոց հաստատեցան կանգնեցան կացին:*

ԱՂՋ ԱՍԱ· ԶԻԱՐԴ ԶԱՅՆՉԱՓ ՔԱՂԱՔՆ ՁԵՐ ԱՅՆՊԷՍ ՎԱՂ ԿՈՐՈՒՍԷՔ·

*Քանզի ցնա, որ այնպէսն հարցանէր, որպէս ի Նեւիոսի պոետէն խաղն կայ, այլովք հանդերձ եւ այս պատասխանի տուաւ.*

ՅԱՌԱՋ ԳԱՅԻՆ ՅԱԽԱԳՈՒԹԻՒՆ ՃԱՐՏԱՐԱԽԱՒՍՔ ՆՈՐՔ ԵՐԻՏԱՍԱՐԴՔ ՏԽՄԱՐՔ

Քանզի յանդգնութիւն ի ծաղկի փթթելոյ հասակի է. խոհեմութիւն՝ ծերացելոց տիոց:

Է

Այլ ուշ յիշատակացն նուազէ: Առնում յանձն, թէ զայն չկրթիցես, կամ թէ ի բնէ հեղգագոյն իցես: Թեմիստոկլէս զամենեցուն քաղաքացեաց զանուանս գիտէր. արդ մի թէ համարիցի՞ք զնմանէ թէ յորժամ յառաջադէմն լինել իցէ հասակաւ, որ Արիստիդէսն իցէ՝ զնա Լիւսիմաքոս կոչեալ ողջոյն տայցէ: Եւ ոչ միայն զնոսա՝ որ այժմ են ծանեայ, այլ զնոցին հարս եւս եւ զհաւս: Եւ ոչ որպէս ասենն ի բանից կորդի, թէ զգերեզմանն ընթերցեալ կասկածեմ, զի մի կորուսանիցեմ զյիշատակսն, քանզի եւ զնոսա ընթեռնլով յիշեմ զմեռեալսն: Եւ ոչ զծերոց ումեքէ լուայ, զի մոռացաւ թէ յորում վայրի զգանձն թաղոյց: Զամենայն ինչ զոր հոգան, եւ զժամադիր ժամն եւ թէ ո՛յք նոցա, եւ որո՛ց ինքեանք պարտիցին, յիշեն:

Զի՞նչ իրաւագէտքն, զի՞նչ քրմապետքն, զի՞նչ իղձքն, զի՞նչ փիլիսոփայքն ծերունիք, քանի՞ բազում ինչ յիշեսցեն: Կան մնան ծերոց հանճարք, թէ միայն փոյթն եւ յօժարութիւն ի տեւ կայցէ: Եւ այն ոչ միայն յարս փառաւորս եւ պատուականս, այլ եւ ի շինականաց եւ ի հանդարտութեան կեանս: Սոփոկլէս ի պարարտ ծերութեան երգահան երեւեցաւ, եւ վասն նորին փութոյ, իբրեւ տան իրաց չփոյթս թուէր առնել, դատափետ ատենաքարշ յիւրոց որդւոց ի հրապարակ կոչեցաւ. եւ որպէս եւ ըստ մերոց բարուցն, որ բարւոքն չենին խնամակալ, սովոր են ի հայրենի արարոց անկանել, այնպէս զնա իբրեւ յաղձամտեալ եւ ի մտաց անկեալ ի տանն իրաց մերժիցեն դատաւորքն: Ասի թէ յայնժամ ծերն զառասպելն՝ զոր ի ձեռին ունէր եւ ի ժամանակին գրեալ էր, զԵդիպոս Կողոնացի, ընթերցաւ առաջի դատաւորացն, եւ եհարց թէ այն երգ յաղձամտելոյ ինչ թուիցի: Իբրեւ զայն ընթերցաւ, ի վճռոյ դատաւորացն զերծաւ:

Արդ միթէ զսա՞, միթէ զՀոմերոս, միթէ զՀեսիոդոս, զՍիմոնիդէս, զՍտեսիքորոս, եւ զորոց յառաջա-

*զոյնն ասացի զՍոկրատէս, զԳորգիաս, զճարտարապետս փիլիսոփայից, զՊիւթագորաս, զԴեմոկրիտէս, զՊղատոն, զՔսենոկրատէս, եւ յետ այնորիկ զԶենոն, զԿղեանթէս, կամ զայն զոր դուք եւս ի Հռովմայեցւոց քաղաքի աստ տեսէք, զԴիոգենէս ստոյիկեան, ստիպեաց ինչ ծերութիւն ի բաց կալ ի փութոյ անտի իւրեանց. ո՞չ ապաքէն յամենեսին ի սոսա ջանից կրթութիւն կշիռ հասարակ կենացն եղեւ:*

*Ըն առ զաստուածեղէն զջանադ զայդոսիկ ի բաց թողուցումք. կարեմ պատմել ի սաբինեան անդոյ շինականս Հռովմայեցիս զիմ զդրացիս եւ տոհմայինս, ոյք յորժամ հեռի իցեն, դրեթէ ոչ մեծ ինչ արդիւնք երբեք յանդի լինիցին, ոչ արկանել տունկս, ոչ առնուլ եւ համբարել զտոհմականս արդեանցն: Թէպէտ եւ այս ի նոսա փոքր ինչ զարմանք են: Քանզի ծեր ոք այնչափ չէք, որ չհամարիցի թէ մի ամ եւս կարիցէ կեալ: Բայց նոքա եւ յայնս եւս վաստակեն, զորս գիտեն թէ չեն ինչ բնաւ անձանց օգուտ:*

ՏՆԿԸ ՄԱՀԱԴԱՃՈՒՆԿ ԾԱՌՍ, ՈՐ ՄԻՒՍՈՒՄ ԴԱՐՈՒՆ ԱՒԳՈՒՏ ԻՑԵՆ

*որպէս ասաց մեր Ստատիոս ի Սինեփեբոն:*

*Եւ մշակն, թէպէտ եւ ծեր եւս իցէ, ցայն՝ որ հարցանիցէ, թէ ո՞ւմ անկիցէ, պատասխանի տայցէ, թէ Դիցն անմահից. որոց ոչ միայն կամ եղեւ զի զդոսա ի նախնեաց առնուցում, այլ զի եւ յետնոց աւանդիցեմ:*

## Ը.

*Եւս աղնուագոյն քան զայն Կեկիղիոս զծերոյ՝ որ ի միւս եւս դար հայիցի, ճառէ, քան զայս բան զոր նորին իսկ Կեկիղեայ ասացեալ է:*

ԾԵՐՈՒԹԻՒՆ, ԵԹԷ ՈՉ ԱՅԼ ԻՆՉ ՉԱՐԻՍ
ԲԵՐԻՑԵՍ ԸՆԴ ՔԵԶ, ՅՈՐԺԱՄ ԳԱՑՑԵՍ, ԱՅՆ ԻՍԿ ՇԱՏ Է,
ԶԻ ԵՐԿԱՅՆԱԿԵԱՑ ԼԻՆԵԼՈՎ ԲԱԶՈՒՄ ԻՆՉ ԶՈՐ ՈՉ ԿԱՄԻ ՏԵՍԱՆԷ.

*Եւ թերեւս բազում ինչ զոր կամիցի. նա եւ յայն՝ զոր չախորժէ, բազում անգամ եւ մանկութիւն անկանի: Եւ զայս եւս նոյն Կեկիղիոս մտախորհոյ՝ ասէ.*

Ի ԾԵՐՈՒԹԵԱՆ ԶԱՅՆ ԻՍԿ ՀԻՒԾՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՐԻՄ,
ԻՄԱՆԱԼ ԹԷ ՅԱՅՆՄ ՏԻՍ ԱՅԼՈՒՄ ԱՏԵԼԻ ԻՑԷ.

Քաղցր եւ հեշտական մանաւանդ քան սակլի։ Զի որպէս ընդ երիտասարդս բարեբարս ուրախ լինին ծերք իմաստունք, եւ թեթեւագոյն նոցին ծերութիւն լինի, որ ի մանկունս մեծարին եւ սիրին. նոյնպէս երիտասարդք ընդ հրամանս ծերոցն խնդան, որովք ի փոյթ առաքինութեանցն յորդորեալ գան։ Եւ ինչ փոքր ինձ՝ ձեզ, եւ ձեզ՝ ինձ հեշտականս լինել կարծեմ։ Այլ տեսանէք, զի ծերութիւն ոչ միայն լքեալ լուծեալ եւ դատարկ չէ, այլ եւ գործօն եւս, եւ ցանգ գործէ ինչ եւ ջանայ, այս ինքն այնպիսի, որպիսի ինչ իւրաքանչիւր ուրուք փոյթ յառաջին կեանսն եղեւ։ Իսկ զի՞նչ, եթէ ուսանի եւս ինչ, որպէս զՍողոն տեսանեմք պարծեցեալ, որ զանձնէ սաէ, թէ տակաւ ծերանամ եւ հանապազ ուսանիմ ինչ. զոր եւ ես արարի, որ զյոյն դպրութիւն ի ծերութեան ուսայ։ Եւ զայն այնպէս անյագ առի ի միտ, իբրեւ ծարաւ ինչ սաստիկ յագեցուցանել ցանկացեալ, որպէս զի եւ այնք եւս ծանօթ եւ գիտելի եղեն ինձ, յորոց այժմիկ օրինակս ի կիր արկանեմ, որպէս եւ տեսանէք։ Զնոյն եւ զՍոկրատայ լուայ թէ արար, ուսեալ հանդամանս նուագածութեանն, կամէի իսկ եւ զայն, քանզի հինքն նուագածութիւն ուսանէին, բայց ի դպրութեան վաստակեցի։

Թ.

Եւ ոչ ցանկամ ինչ այժմ ընդ ոյժ եւ ընդ զօրութիւն առն երիտասարդի, որպէս յերիտասարդութեանն՝ զցլու եւ զփղաց զօրութիւն չըղձանայի, քանզի այս մեւս եւս զարմութիւն էր ծերութեանն։ Որ ինչ էն, նովիմբ արժան է վարել, եւ զինչ գործեաց, ըստ կարին գործել։ Քանզի ո՞ր բարբառ քամահանաց կայցէ քան զՄիղոնի կրոտոնացւոյ, որ յորժամ ծերն իսկ էր եւ զնահատակն արշաւեալս յասպարիզի տեսանէր, ասի թէ հայեցաւ ընդ բազուկս իւր եւ զարտասուս հարեալ ասաց. Այլ դոքա քաջ քաջ մեռեալ են։ Եւ այնպէս դոքա, քան թէ դու իսկ, զառանցեալդ։ Զի ոչ եթէ ի քէն երբեք ազնուացեալ ես, այլ ի կողից եւ ի բազկաց քոց։ Ս. Եղիոս այնպիսի ինչ ոչ գործեաց, եւ ոչ Տի. Կորունկանիոս, եւ

ոչ այժմ Պ. Կրասոս, յորոց քաղաքացւոց օրէնք կարգէին, որոց իմաստութիւն յառաջադէմ մինչեւ ցյետին շունչն եղեւ:

Զանգիտեմ թէ դուցէ տկարանայցէ ծերութեամբ ճարտարախօսն: Քանզի գործ նորա ոչ մտաց միայն է, այլ ուժոյ եւս, եւ զօրութեան: Այլ ոչ գիտեմ զիարդ կամ որով օրինակաւ այն ի բարբառ ալեւորացն ի ծերութեան պայծառանայ. զոր տակաւին չկորուսի, եւ տեսանէք զամս հասակի իմոյ. բայց սակայն վայելուչ է բան ծերոյն, հանդարտ եւ ցածուն: Եւ բազում անգամ գեղեցիկ եւ մեղմական ճառք ծերոյ ճարտարախօսի, ինքնին իւր ունկնդրութիւն գործէ: Եւ զոր դու քեզէն կատարել ոչ կարես, սակայն Սկիպիոնի մարթես հրաման տալ եւ Ղելիոսի: Քանզի զի՞նչ ինչ քան զծերութիւն քաղցրագոյն կայցէ, որ մանկութեան փութով բարգաւաճ լեալ իցէ:

Մի թէ զայն եւս զօրութիւն չթողուցո՞ւմք ծերութեան, զի զերիտասարդսն ուսուցանիցէ եւ խրատիցէ, եւ առ ամենայն իսկ պաշտամանցն պարտոյս թեքեալ կազմիցէ. զի՞նչ քան զայն գործ պայծառագոյն կայցէ: Իսկ ինձ Կն. եւ Պ. Սկիպիոնք, եւ հաւքն քո երկոքին, Ղ. Էմիլիոս, եւ Պ. Ափրիկանոս գունդ գունդ մանկունով այնուամենօք բախտաւորք երեւէին: Եւ ոչ զոք ի ճարտարապետաց հանդամանաց արուեստից ճարտարութեան պարտ իցէ չերանելիս կարծել, թէպէտ եւ ծերացեալ եւս իցէ զօրութիւնն եւ նուազեալ: Թէպէտ եւ այն զօրութեան նուազութիւն բազում անգամ յերիտասարդութեան չարեացն գործի եւ ոչ ծերութեան: Քանզի երիտասարդութիւն ցանկացող եւ անխառն մարմին տկարացեալ ծերութեանն աւանդէ:

Կիւրոս որպէս ի Քսենոփոնի գիրսն կայ, ճառիւքն, զոր ի մեռանելն արկ, թէպէտ եւ ծեր եւս յոյժ էր, յայտ առնէ, թէ չզգայր երբեք եթէ տկարագոյն ինչ իւր ծերութիւնն լեալ իցէ, քան որչափ երիտասարդութիւնն լեալ էր: Եւ ես յիշեմ զՂ. Մետելլոս, որ յորժամ քառամեայ ժամանակ յետ երկրորդի բդեշխութեանն մեծ քրմապետ կացեալ էր, քան եւ երկու ամ եկաց ի գլուխ քրմութեանն, այնպէս հարուստ եւ հզօր

էր զօրութեամբ ի յետին ժամանակի հասակին, մինչեւ երկրասարդութեան իսկ ոչ ցանկալ։ Զէ ինչ ինձ հարկ զինէն ճառել, թէպէտ եւ այն իսկ առանձինն իմն է ծերոց, եւ մերում հասակին շնորհ։

## Ժ.

Տեսանե՞ք զծերդ ի Հոմերոսի դիւցն, բազում անգամ Նեստոր, զիւր առաքինութիւնն քարոզէ։ Քանզի յերրորդում տես մարդկան կեայր, եւ չէ՞ր նմա կասկածել թէ մի յորժամ զճշմարիտն զանձնէ պատմիցէ, ցոփ ինչ եւ շատախօս կարի թուիցի։ Քանզի որպէս Հոմերոս ասէ, ի նորա լեզուէն քան զմեղր եւս քաղցրագոյն բանն հոսէր. եւ ոչ կարօտանայր ինչ իւիք մարմնոյ զօրութեամբ առ այնպիսի քաղցրութիւնն. եւ սակայն զօրավարն Յունաց աշխարհին՝ չըղձանայ թէ տասն Այակայ նմանս ունիցի, այլ թէ Նեստորի. զոր եթէ դէպք տային, համարի թէ վաղ կործանէր Տրովացւոց քաղաքն։

Այլ այսրէն յիս դառնամ։ Ութսուն եւ չորից ամաց եմ. եւ կամէի արդարեւ թէ կարիցեմ նոյնն, որով Կիւրոս պարծէր, պարծել. բայց սակայն զայն իշխեմ ասել, թէ չեմ այնպէս հզօր, որպէս յորժամ զօրականն էի ի պունիկական կռուի, կամ կապարճակիր ի նմին պատերազմի, կամ բդեշխ ի Սպանիա, կամ յետ քառամեայ ժամանակի, հազարապետ կացեալ ճակատ եառ առ Թերմոպիւղեօք, ի բդեշխութեան Մ. Ակիղեայ Գղաբրիոնի, բայց սակայն որպէս դուքդ տեսանեք, ոչ բնաւ ջղատեաց եւ ծնդեաց զիս ծերութիւն. ոչ ատեան իմում զօրութեանս ցանկանայ, ոչ բեմն, ոչ բարեկամք, ոչ տնանկք, ոչ հիւրք։ Քանզի չեմ երբեք հաւանեալ այնմ հին առասպելին յաճախելոյ, որ պատմէ. թէ ԵՐԱԳԱՄ Ի ԾԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՆԻՍ ԹԷ ԲԱՂՁԻՍ ԺԱՄԱՆԱԿՍ ԿԱՄԻՑԻՍ ԾԵՐ ԼԻՆԵԼ. Իսկ ես ախորժեմ առաւել սակաւ ինչ ժամանակ ծեր լինել, քան ծեր լինել, մինչ չեւ իցեմ։ Վասն այնորիկ չեկն ոք զիս տակաւին, որում առ պարապութեան չկարիցեմ երեւել։

Այլ թերեւս սակաւ քան զձեզ զօրութիւն ունիցիմ։ Նա եւ ոչ դուք զՏ. Պոնտիոսի հարիւրապետի զզօ-

րութիւնն ունիք . արդ այնուադոյն ինչ որ նա քան զձեզ իցէ : Զաւ ինչ զօրութիւն միայն որ ունիցի, եւ այնչափ, որչափ իւրաքանչիւր որ ձեռնհաս իցէ, ջանասցէ, եւ չզլաւիցի նա մեծ իմն զօրութեան ցանկութեամբ : Եւ թէ յըմբշամարտ մրցութիւնս ի մարտիկան եմաւտ Միլոն*, զուարակ մի կենդանւոյն ի վերայ ուսոց բարձեալ : Արդ զա՞յս մարմնոյ զօրութիւն արդեւք, եթէ զՊիւթագորայ զզօրութիւն հանճարոյ իմաստութեան կամէիր թէ տայր որ ցքեզ : Վայլեն բարութեամբ փարեսցիս, յորժամ դուցէ . թէ չգուցէ, մի ցանկար : Այս թէ ոչ պատանեակք մանկութեան, եւ որ սակաւիկ յառաջ մատուցեալ իցեն հասակաւ երիտասարդութեան պարտին տենչանալ : Ստուգեալ գնացք են աւուց, եւ մի ճանապարհ բնութեան, եւ այն պարզ . եւ իւրաքանչիւր հասակաց անցնիւր ժամանակք տուեալ են . զի տկարութիւն մանկտւոյ է, եւ գաղանութիւն պատանեաց, եւ ցածուն միտք հաստատուն աւուց, եւ ծերութիւն պարարտ ինչ մի բնական ունիցի, որ յիւրում ժամանակին պարտ իցէ առնուլ : Կարծեմ թէ լուեալ իցէ քո, Սկիպիոն, զոր ինչ հիւրն քո նախնի Մասինիսսա այսօր իննսնամենի գործէ, յորժամ հետի ճանապարհ ուրեք գնայցէ, յերիվար բնաւ ոչ հեծանի . իսկ յորժամ անդրուարու երթայցէ, ոչ իջանէ . ոչ առ անձրեւի ինչ կամ առ ցրտոյն փանդի զգլուխն ծածկէ . յոյժ իմն պնդութիւն է ի նմա . եւ այնպէս կատարէ զամենայն գործ թագաւորութեանն : Արդ կրթութիւն եւ եւ ժուժկալութիւն զօրութիւն ինչ յառաջին զօրութենէ եւ ի ծերութեանն կարէ պահել :

## ԱԺ.

Չէ՞ք զօրութիւն ի ծերութեան : Չպահանջեն զօրութիւն ի ծերութենէ : Արդ եւ օրինօք եւ հաստատութեամբք թափուր է հասակ մեր յայնպիսեաց փատակոց զորս չէ մարթ առանց զօրութեան բառնալ : Վասն որոյ ոչ միայն զոր չկարեմք, այլ եւ ոչ որչափ ինչ կարեմքն, պահանջեմք :

Այլ դոն բազում ծերք այնպէս դողդոջունք, զի ոչ մի ինչ գործ կամ կենաց պաշտամս ամենեւին մարթեն

վճարել։ Այլ եւ այն չէ ինչ առանձինն ծերութեան այլ առ հասարակ հիւանդութեան։ Քանի՞ տկարագոյն էր ուստր Պորգեայ Աֆրիկանոսի, այն որ զքեզ յոր-դեգրիս առ, որպէս հիւանդոտ եւ ցաւած. եւ եթէ այնպէս ինչ չէր լեալ, եւ նա միւս եւս լոյս քաղաքիս լինէր։ Զի ի հայրենի մեծանձնութիւնն պարարտագոյն ուսումն վարդապետութեան յաւելեալ էր։ Իսկ արդ զի՞նչ զարմանք իցեն թէ ի ծերան երբեմն հիւանդք իցեն, ուր եւ երիտասարդք իսկ յայնմանէ ապրել ոչ կարեն։ Պարտ եւ պատշաճ է հակառակ կալ ծերութեանն, Լելի եւ Սկիպիոն, եւ բազում փութով զնորա թերակատարու-թիւն լնուլ։ Պարտ է իբրեւ ընդ ախտի ցաւոց այնպէս ընդ ծերութեանն կռուել։

Պարտ է զգայման առողջութեանն ունել. չափ ինչ կրթութիւն ի կիր արկանել. այնչափ ինչ ուտել եւ ըմ-պել, զի արծարծեսցի զօրութիւնն, եւ մի ճնշեսցի։ Եւ ոչ մարմնոյ միայն պարտ իցէ զարման տանել. այլ եւ մտացն եւ ոգւոց յոյժ իսկ առաւել։ Զի եւ նոքա, թէ ոչ իբրեւ ի ճրագ ձէթ արկանիցես, շիջանին յափշին ծե-րութեամբ։ Եւ մարմինք աշխատութեամբ եւ կրթու-թեամբ ծանրանան, իսկ ոգիքն վարժեալք թեթեւա-գոյնք լինին։ Քանզի զորոց Կեկիլեան ասաց, թէ ծերս գուսանս անմիտս. զայնցանէ որ վաղվաղաք առ հաւատալ իցեն յայտ առնէ, զյաղձառեցոյն եւ զթափաշելոց. որք ոչ եթէ ծերութեան ինչ չարիք են, այլ ծուլացելոց եւ յուլացելոց եւ քնէածն ծերութեան։ Որպէս զեղծու-թիւն եւ անառակութիւն մանաւանդ երիտասարդաց է քան ծերոց, բայց սակայն ոչ ամենեցուն երիտասարդաց է այլ յոռեացն եւ անպիտանեաց, սոյնպէս եւ ծերոցն ան-մտութիւն, որ զառանցելն կոչեցի, ծերոց թեթեւաց է եւ ոչ ամենեցուն։

Ուստերս չորս հուժկուս, եւ հինգ դստերս ունէր. այնչափ տուն եւ ծառայից հոգայր Ապպիոս ծերն եւ կոյրն։ Քանզի զմիտսն իբրեւ զաղեղն ձգեալ եւ պնդեալ ունէր, եւ ոչ թուլացեալ անկանէր ընդ ծերութեամբն։ Ոչ իշ-խանութիւն միայն յիւրսն ունէր, այլ եւ տէրութիւն. երկնչէին ծառայք, պատկառէին որդեակք, ամենքեան սիրէին, բոլորքեան յակն առնուին. յայնմ տան հաստա-

տուն կայր հայրենի սովորութիւնն եւ խրատ: Քանզի այսպէս պատուական է ծերութիւն, եթէ ինքն անձամբ անձին պաշտպանիցէ, եթէ զիւր իրաւունս ունիցի, թէ ոչ ընդ ուրուք ձեռամբ դրուեալ իցէ, թէ մինչեւ ցյետին շունչն իւրոյն տիրեսցէ: Զի զոր օրինակ զերիտասարդ յորում մի ինչ ծերութեան գտանիցի, այսպէս եւ զծեր, յորում մի ինչ երիտասարդութեան իցէ, գովեմ. զայս եթէ զհետ ոք գնայցէ, մարմնով մարթի ծեր լինել, մտօք ոչ երբեք: Եւթներորդ գրքութիւն* սկզբանց գրոցն ի ձեռին իմում է. զամենայն զհնութեան յիշատակարանս ի մի վայր գումարեմ. զերեւելի դատաստանացն՝ որոց պաշտպանեցի, այժմիկ զճառսն հաւատեաւ յօրինեալ կարգեմ. զարդարութենէ եւ զիրաւանց բղձիցն եւ զքրմապետացն եւ զքաղաքի օրինաց մատենագրեմ. եւ յոյն գրութեանն եւս վարիմ. բառ պիւթագորայցն սովորութեան՝ վասն զուշ յիշատակացն կրթելոյ, զոր ինչ իմ զտիւ խօսեցեալ եւ լուեալ եւ գործեալ իցէ, երեկունն յիշատակեմ: Սոքա են վարժք իմաստութեան, սոքա արշաւանս ասպարիզի մտաց. աստէն ի սոսին ընդ քրտան մաշեալ եւ վաստակեալ, կարի մարմնոյ զօրութեան ոչ ցանկամ: Կամ առ բարեկամս. գնամ ստէպ ի ծերակոյտ անդր, եւ բերեալ դնեմ առաջի իրս իրս զորոց ընդ երկար խորհեալ ի միտ իցեմ եւ տեսանեմ զնոսա մտաց եւ ոչ թէ մարմնոյ զօրութեամբ: Զոր եթէ կատարել ոչ կարիցեմ, սակայն խշտեակին իմ մխիթարէ զիս, զմտաւ ածեալ զայն՝ զոր առնել ոչ կարիցեմ. բայց առաջին կեանքն տան ինձ այնմ ձեռնհաս լինել: Քանզի որ ցանգ յայսպիսի փոյթ եւ ի վաստակս կեցցէ. չիմանայ յորժամ ծերութիւն ի վերայ հասեալ տագնապիցէ: Այսպէս մեղմով յանգգայ ծերանայ հասակն, եւ ոչ յանկարծօրէն փաղփաղակի խորտակի, այլ երկայն ժամանակաւ շիջանի:

ԺԵ.

Գայ այսուհետեւ երրորդ զրպարտութիւն ծերութեան. զի ասեն թէ ի վայելչութեանց եւ ի ցանկութեանց անկանիցի: Ո՜հ մեծապայծառ պարգեւի տիոյն. քանզի արդարեւ զայդ հանէ ի մէնջ, որ չարաչար իմն յերի-



8824-57 708

տասարդութեանն է։ Առէք ի ձեռս, երիտասարդք առաքինիք, զհին ճառս Արքիւտեայ տարենտացւոյ այն մեծի եւ աւագի, որ տուեալ ի ձեռս իմ յորժամ երիտասարդն էի ի Տարենտացւոց քաղաքի ընդ Կ. Մաքսիմեայ։ Ոչ մի ինչ գլխաւոր ժանտագործ ցաւս, քան զմարմնոյ ցանկութիւն, ասէր, տուեալ յախտարակաց, եւ այնր ցանկութեան տենչանք խառն ի խուռն եւ արձակերասանակ գրգռին առ ստանալ։

Եւ թէ անտի աշխարհի մատնութիւնք, անտի հասարակաց իրաց կործանմունք ծնանին, անտի գաղտագողի պատգամանաց ի թշնամիս լինել, եւ ամենեւին չիք իսկ ինչ եղեռն եւ ոճիր, յոր չդրդիցեն տենչանք ցանկութեանն, եւ բնաւ իսկ յոռութիւնք ոչ այլ ուստեք հրապուրեալ գրգռին թէ ոչ ի ցանկութենէ։ Եւ փոխանակ զի բնութեանն եւ կամ դից ուրուք ոչ ինչ ազնուագոյն քան զմիտս՝ մարդոյն տուեալ իցէ. այնմ աստուածեղէն պարգեւին չիք ինչ այնպէս թշնամի, որպէս զցանկութիւն։

Քանզի եւ ոչ յորժամ տենչանք տիրիցեն, գոյ տեղի ժուժկալութեան, եւ բնաւ իսկ ամենեւին ի ցանկութեանն թագաւորութեան չմարթի առաքինութեան կալ յակատանի։ Եւ զի մարթիցի զմին առաւելագոյն ի վերայ հասանել, դուլ եւ պատուէր տայր նկատել մտօք զայր մի անհնարին ի մարմնոյ ցանկութիւն գրգռեալ, եւ չհամարէր թէ իցէ ինչ ումեք այն երկմտութեան, թէ ցորքան ժամանակս նա այնպէս շռայլեցի, ոչ մի ինչ մարթի ածել զմտաւ, ոչ իմիք բանիւ, եւ խորհրդով հասանել։ Նմին իրի իսկ չիք ինչ այնպէս խոտան եւ ժանդաբեր քան զցանկութիւն, զի թէ մեծ իմն եւ երկարագոյն ցանկութիւնն իցէ, զամենայն մտացն լուսաւորութիւն շիջուցանէ։ Զայս ամենայն Արքիւտայ ընդ Կ. Պոնտեայ սամնիտացւոյ հօրն այնորիկ յորմէ Սպ. Պոստումիոս եւ Տ. Վետուրիոս ի Կաւդինեայ մարտին ի պարտութիւն մատնեցան, խօսեցեալ ասէ Նէարքոս տարենտացի մեր հիւր, որ կացեալ մնացեալ էր ի բարեկամութեան Հռոմայ ազգին, եւ ի ծերոց նոյնպէս լուեալ պատմէր, եւ թէ էր ի մէջ բանիցն այնոցիկ Պղատոն աթենացի, զոր գտանեմ իսկ ի Տարենտացւոց քա-

զաքնեկեալ ի Լ. Կամիլլեայ եւ Ապպեայ Կղաւդեայ բդեշխութեան:

Զիմ զայնցանէ յաճախիցեմ ճառել, զի առնուցուք ի միտ, եթէ զցանկութիւն մօք եւ իմաստութեամբ չկարիցեմք քամահել, պարտուպատշաճ է շնորհակալ ծերութեանն լինել, զի որ չէ արժան, զայն չտանէ հաճոյ: Քանզի արդեօք լինի խորհրդոյ ցանկութիւն, իմաստութեան թշնամի է, եւ զմտաց զաչս խլէ, եւ ընդ առաքինութեան չունի ինչ հաղորդութիւն: Յակամայ կամս զառն հզօրի զՏ. Փղամինեայ զեղբայրն զԼ. Փղամինինոս ի ծերակուտէն ի բաց ընկեցի եւթն ամօք յետոյ քան զդեշխն կալ նորա. բայց հարկ համարեցայ զցանկութիւնն յայտ առնել: Քանզի նա յորժամ բդեշխն էր ի Գաղղիացւոց աշխարհին ի խրախութեանն ի ժանդապարծոյ աղաչեցաւ, զի տապարաւ տաշեսցէ զմի ոմն յայնցանէ, որ ի պարտանդան կային գլխապարտքն: Նոյն յորժամ Տիտոս եղբայրն նորին համարակալն էր յառաջ իսկ քան զիս, անկաւ: Իսկ ինձ եւ Փղակկեայ արդարեւ չթուեցաւ հաճոյ այնպիսի ժանտ եւ մոլորոյս ցանկութիւն, որ զթշնամանս անէրութեանն ընդ գործ շնութեանն խառնեաց:

Գ․Ժ․

Բազում անգամ լուայ ի ծերոց, որք զանձանց ասէին թէ ի մերում անդ մանկութեան ի ծերոց անտի լուաք, թէ սովոր էր Կ. Փաբրիկիոս զարմանալ, զի յորժամ առ արքայ Պիւռոս հրեշտակադնաց լեալ էր, լուաւ ի Կինեայ Թեսաղացւոյ թէ է ոմն [*] յԱթենացւոց քաղաքի, որ զանձնէ խոստանայ թէ իմաստուն իցէ եւ ասիցէ թէ զամենայն ինչ զոր առնիցեմք, ի ցանկութիւն պարտ իցէ հանել: Եւ որ ի նմանէն զայն լուան Մ. Կուրիոս, եւ Տի. Կորունկանիոս սովոր էին բղձանալ, զի նոյն հաւանութեան թուիցի Սամնիտացւոցն եւ Պիւռեայ իսկ գլխովին. զի դիւրաւ այնուհետեւ ի պարտութիւն մատնիցին, յորժամ ի ցանկութիւնս զանձինս տայցեն: Մ. Կուրիոս ընդ Պ. Դեկկեայ կեայր, որ հնգամեայ ժամանակաւ յառաջ քան զնորա բդեշխութիւն զանձն փոխանակ քաղաքին

նուիրեալ ի չորրորդում բդեշխութեանն: Զնոյն ճանաչէր Փաբրիկիոս, գիտէր և Կորունկանիոս, որք յիւրեանց կենաց և ի գործոց այնր՝ զումէ ասեմ, Պ. Դեկեայ, ի միտ առնուլն թէ արդարև է ինչ ի բնութենէ գեղեցիկ և լուսաւոր որ իւրովի ինքնակամն խնդրելի, զորոյ և լաւքն և առաքինիք մնացեալք զհետ երթային, խառնեալ և արհամարհեալ զցանկութեամբն:

Արդ ընդէր համակ զցանկութենէ խօսիցիմք, որ ոչ միայն զարմանք ինչ չէ, այլ և գլխաւոր դրուատիք ծերութեան. զի ոչ ցանկութիւնս ինչ կարի փափաքէ ծերութիւնն: Ի կոչունս, ասեն, չվայելէ և ի բազմախորտիկ սեղանս յարդարեալս և ի յաճախ գինըմպելիս: Այս ուրեմն և ի գինեզինութենէ և ի խակութենէ և ի քնահատն լինելոյ ազատ և ի վեր է: Բայց թէ շնորհել ևս ինչ պարտ իցէ ցանկութեանն, քանզի նորա ողոքանաց չլինիմք դիւրաւ դիմադարձ, զի աստուածեղէն մաք Պղատոն կեր չարեաց * ցանկութիւնն անուանէ, քանզի նովին իմն ըմբռնին մարդիկ, որպէս խանծի ձկունք. թէպէտ և յանչափ կոչունս չվայելէ ծերութիւն, սակայն ի չափ ինչ խրախունս մարթի ուրախ լինել: Զ Մ. Դուիլիոս, որ զառաջինն զՊիւնացիս նաւատորմիղ նաւուք պարտեաց, ի մանկութեան բազում անգամ տեսանէի զի ծեր էր, և յընթրեաց դարձեալ գայր, ուրախ լինէր ջահիւ և փողովք, զոր ինքն իսկ առանձինն յանձն առ առանց ուրուք օրինակի. այնչափ ինչ համարձակութիւն շնորհէին փառքն:

Բայց հի՞մ ես զայլոց ասիցեմ. յիս իսկ այսրէն եկից: Նախ միշտ հանապազ ընկերակիցս ունէի: Իսկ ընկերակիցքն հաստատեցան կացին յորժամ ես կաղարձակիր էի, յետ ընդունելութեան իդէական յաշտից մեծի Մօրն Անահտայ: Արդ ի բազմականի ընդ ընկերաց նստեալ ամենևին չափով ուտէի, բայց էր և եռանդն իմն հասակին, որ իբրև յառաջ մատչէր, ամենայն ինչ օրըստօրէ մեղմագոյն առնէր: Զի ոչ եթէ զայնց խրախութեանց ուրախութիւն, մարմնոյ ցանկութեամբք չափէի և ոչ դասուք բարեկամաց և նոցին բանիւք: Քանզի քաջիկ իսկ մեր ասացք զբազմականս կոչնոց բարեկամացն որ կենաց հաղորդութիւն է, կենա-

կցութիւն անուանեցին. ևս ազնուագոյն քան զՅոյնս որք զնոյն իսկ մերթ զխնկերրուս կոչեցին և մերթ ըն-թրիս. զի որ փոքրն էր ի նոսա, զայն իմն յայտ թուին առնել:

### ԳԺ

Իսկ ես քաղցր ընդ բանս ուրախ լինիմ, և ընդ գի-ւղօղ խրախունս ևս խնդամ. ոչ միայն ընդ զուգակցաց, որ յոյժ սակաւք են, այլ և ընդ ձերում ևս հասակի և ընդ ձեզ իսկ. և շնորհ ունիմ ծերութեանն, որ աճե-ցոյց յիս զանյագութիւն բանից և զկերակրոյ և զըմ-պելեաց տենչանս եբարձ: Ապա եթէ և այդպէս ուրախ առ-նիցեն, զի մի թուիցիմ թէ ամենևին ի մարտ պատե-րազմի ընդ ցանկութեան զրգռեցիմ, որում թերևս գոյ ինչ չափ բնականաւոր, ես ոչ համարիմ թէ բնաւ այսց ցանկութեանց չզգայ ծերութիւն: Իսկ զիս և առաճարա-դեայոյն զաւհերիցութիւնն որ յաւագաց կարգեցան, ու-րախ առնեն, և բանն որ ըստ աւագաց սովորութեան ի գլխաւորէ առնի ի գինիսն մինչև ցվերջինն հասանիցէ. սակաւ և զեղուն բաժակք որպէս ի Քսենոփոնեայ սիմ-պոսին՝ որ թարգմանի խրախութիւն, կայ. և զովու-թիւնն ամառայնի և կամ արեգական և կամ ձմերական կրակ: Զայս ամենայն և ի Սաբինան սովոր եմ առնել և եմ զօր հանապազ ի խրախունս դրացեաց իմոց. և զժամ խրախութեանն յերկարեալ ձգեմք այգի այգի խօսիւք մինչև ցմեծ ժամ գիշերութեանն:

Այլ թերևս ի ծերսն չէք տենչանացն խտտիղքն: Այնու մեւ ևս յանձն. նա և ոչ այնպիսի կրաց ցանկու-թիւն գոյ ի նոսա: Զի ինչ այն ծանր և դժուարին, որում ոչն ցանկաս, չունել: Քաջիկ ասաց Սոփոկլէս յորժամ ծերն էր և եհարց ոք զնա թէ վարիցի սաստը-կան ցանկութեամբ. Ան անդր, ասէ, փարդաստ, քա-լեցի, զի մնացեալ իսկ ի նմանէ իբրև յագխատարար տեառ-նէ և ի մոլեգնոյ ելի մոլարաբար փախստեայ: Թերևս որ այնպիսեացն ցանկացեալ իցեն, ծանր ինչ չունելն թուի-ցի. իսկ որ յագք և լիք իցեն, քան զվայելելն՝ չունելն ևս հեշտական է: Թէպէտ և ոչ եթէ չունիցի, որ ցան-

կանայց է խակ ոչ։ Նա այսպէս ասէր թէ, եւս իմն հեշտականագոյն է քան զվայելելն՝ չցանկալ։

Ապաքէն վայելել վայելեն ասոնք մանկութեանն յայնպիսի ցանկութեանն, այլ չընչենոյք վայելեն, որպէս կանխագոյն ասացաք, յետ այնորիկ՝ զի եւ ծերութիւն, եթէ յաճախութեամբ չունիցի, սակայն ոչ եթէ ամենեւին խակ եւ բնաւին չունիցի։ Զոր օրինակ եւ ընդ Տորքեան Ամբիխոս*† առաւելագոյն ուրախ լինիցի որ յառաջնում դարանի անդ նստեալ հայեցի, ուրախ լինի եւ որ ի վերջնումն նստիցի. նոյնպէս եւ երիտասարդութիւն մօտ հայեցեալ ընդ ցանկութիւնս թերեւս ուրախ առաւել լինիցի. բայց եւ ծերութիւն ուրախ առնի հայեցեալ ընդ նոսա բացուստ ի բաց, այնչափ որչափ շատ եւ բաւական իցէ։

Նա եւ այն փոքր իցէ, մնացն իբրեւ ի վարձու ունել զցանկութիւնն եւ զխաղս եւ զհակառակութիւնն եւ զթշնամութիւնս եւ զամենայն համօրէն ցանկութիւնս, համակ ընդ իւր լինել եւ ընդ իւր կեալ։ Իսկ եթէ ունիցի ինչ ծերութիւն իբրեւ ճարակ փութոյ եւ ուսման, չիք ինչ քան զպարապորդ ծերութիւն հեշտականագոյն։ Տեսանէաք զՍ. Գաղղոս որ ընտելագոյն էր հօրն քում, Սկիպիոն, զի զօդ մեռանէր ի ջանս անդ վաստակոյն չափելոյ զերկինս եւ զերկիր։ Քանիցս անգամ մինչ գիշերի ձեռն արկեալ գիր ինչ նկարէր եւ լոյս առաւօտին ի վերայ հասանէր. եւ քանիցս անգամ գիշեր՝ յորժամ վաղորդայն առնէր սկիզբն։ Քանի՞ն այն ուրախ առնէր զնա, յորժամ զարեգական եւ զլուսնի նուազութիւն կանխագոյն պատմէր մեզ բազում ժամանակօք։

Զի՞նչ լինիցի եւ ի ջանս քաջատեսիկն մտաց թէպէտ եւ թեթեւագոյնք իմն իցեն։ Որչափ ընդ իւր պունիկեան կռիւն ուրախ լինէր Նեւիոս. որչափ Պղաւտոս ընդ Տրուկուղենտոս եւ ընդ Փսեւդողոս*†։ Տեսի եւ զԼ. Լիւիոս ծերունի այն որ վեց ամօք կանխագոյն քան զծնունդն իմ, ուսուցանէր առակս, յորժամ Կենտոնն եւ Տուդիտանոս բդեշխք էին, եւ մինչեւ ցիմ երիտասարդութիւնն եղեւ յառաջադէմ հասակաւ։ Զի՞նչ ասացից կամ զի՞նչ խօսեցայց եւ զՊ. Լիկինեայ Կրասեայ փութոյ եւ յօժարութենէ վասն քրմապետութեան եւ քաղաքացեաց իրաւանցն. կամ զՊ. Սկիպիոնեայ ջա-

նից որ ընդ աւուրս ընդ այսոսիկ ընդ սակաւս եկայ՝ քրմապետ մեծ ։ Նոյն գծերս զամենեսին զորոց յիշատակեցիս, ընդ նոյն փոյթ փառեալս բորբոքեալս տեսանեմք ։ Իսկ զԿեթեգոս, զոր յիրաւի Ուղեղ Սուադեայ կոչէր Էննիոս, քանիօն փութով եւ ի ծերութեանն ի ճարտարխօսութիւն կրթէր ։ Իսկ արդ զինչ այն կոչնոց եւ խաղուց եւ վարձակացն վայելչութիւնք իցեն յորժամ այնպիսի վայելչութեանց զնիցին համեմատ ։ Մանաւանդ զի այս ամենայն ջանք վաստակոց են ուսման վարդապետութեան ։ Որք յանձինս իմաստնոցն եւ բարւոք խրատեալոցն զոյգ ընդ տիոցն աճեցեալ զարգանայցեն. զի եղանիցէ ի գլուխ աքանչելի բանն Սողոնի զոր զանձնէ ասաց, որպէս կանխագոյն խօսեցայ, թէ բազում ինչ հանապազօր ուսեալ այնպէս ծերանայցէ. եւ քան զայն չէ իսկ մարթ եւ հնար թէ իցէ ինչ յաճախագոյն ուրախութիւն ։

## ԵԺ.

Գամ այսուհետեւ եւ ի մշակացն հեշտականութիւն, որով զուարճանամ ես յոյժ, որ եւ չխափանին ինչ ծերութեամբ, եւ թուի ինձ, թէ յիմաստնոցն կեանս մօտ գան ։ Քանզի ունին համար ընդ երկրի, որ ոչն երբեք ընդդէմ զառնայ տէրութեանն, եւ ոչ առանց տոկոսեաց երբեք հատուցանէ. այլ երբեմն սակաւ վաշխիւք եւ բազում անգամ մեծաւ տոկոսեօք ։ Թէպէտ եւ զիս ոչ առհմականք միայն, այլ եւ զօրութիւն եւ բնութիւն իսկ երկրին ուրախ առնէ, որ իբրեւ ի ծոց իւր ի կակղեալ եւ պատրաստեալ տիօսաձիգ զսերմանիսն ցանեալս ընդունիցի, նախ զսերմն ծածկեալ՝ բուռն հարեալ փակեալ լեալ պինդ ունի. յետ այնորիկ ջերմացեալ ի գոլոյ եւ ի պատելոյ եւ ի փարելոյ զնովաւ, ջոփացեալ զալարացեալ զբոյսն ի դուրս արձակէ. որ արմատովքն խիղս արկեալ զերկրէ, տակաւ աճէ, եւ կանգնի կայ ծնկակապ ուղղորդ ցօղն ծունր առ ծունր, իբրեւ ի չափ իմն հասեալ ընդ պատենիւքն մնանէ, յորոց իբրեւ արձակի, ապա յորդէ զարմօրս հասկին զցորենահատն կարգաւ կազմեալ յօրինեալ եւ ի մանր մանր ինչ հաւուցն խածատելոյ քաղոյն պատնիշովքն ամրանայ ։

Զի՞ եւ զորթոյ բոյս եւ զտունկս եւ զաճմունս յիշեցեմ: Չկարեմ յագել ուրախութեամբ, թէ միայն ծանիցէք զիմոյ ծերութեան հանգստեան եւ զխնդութիւն: Քանզի թողում ի բաց զզօրութիւն իսկ ամենայնի, որ յերկրէ ծնանիցի. որ ի փոքրիկ թզոյն կորզոյ կամ ի թնոյ խաղողոյ կամ յայլոց եւս արմտեաց եւ արմատոց մանր սերմանց այնչափ բունս եւ ոստս եւ բողբոջս ծնանի: Շառաւիղք եւ տունկք, ուռք եւ բարունակք, տաշտքն գլխովին եւ բազուկքն ընջովին եւ տունկք մանրատունկք. ո՞չ ապաքէն սոքա լինին որ զո եւ պէտ ոք ուրախ առնիցեն զարմանալեօք: Որթ քանզի ի բնէ իսկ խոնարհահակ է եւ եթէ ոչ կանգնի եւ հաստատի, ընդ գետին քարշի. զի զանձն կանգուն ունիցի, իւրովք ղնղակօք իբրեւ ձեռամբք, զոր ինչ եւ գտանիցէ, բուռն հարկեալ շաղեալ պատի, եւ եթէ բազմապատիկ թափառեալ մանի սողի, երկաթով կարէ եւ արգելու մշակաց ճարտարութիւնն, զի մի անտառացեալ ուռօք եւ բարունակօք, ընդ ամենայն կողմանս առաւել հատատեսցի:

Իսկ ի գալ գարնայնոյն ժամանակի ի նոսա որ թողանն, յայտ գայ իբրեւ ի յօդս խաղալեաց ուռոյն այն, որ անուանեալ կոչի ակն, ուստի խաղող եկեալ երեւի. որ եւ խոնաւութեամբ անանի հիւթով երկրին եւ ի տապոյ ջերման արեգական աճեցեալ զառաջինն թթու եւ փոթոթահամ ի ճաշակել է, ապա հասեալ քաղցրանայ, եւ հանդերձ տերեւապատ զգեցեալ եւ ոչ առանց չափ ինչ ջերման է, եւ ի սաստիկ տօթոյ արեգականն ապրի: Քան զոր ի՞մ իմք մարթիցի լինել ուրախարար ի վայելել եւ գեղեցիկ ի տեսանել. որոյ ոչ պիտանութիւնն միայն, որպէս կանխագոյն ասացի, այլ եւ զարմանն եւ բնութիւն իսկ ինքն ի գլխովին ուրախ առնէ զիս: Անթիցն կարգն, գլխոցն լուծքն եւ հանգոյցք եւ տարածանել որթոյն. եւ յուռոյն կիսոյն յատանել, զորմէ ասացին, եւ կիսոյն թողուլ: Զի՞նչ եւ զոռոգանելն եւ զպրբուցանել, զի՞նչ զփոսիցն փորել եւ զվերստին նորոգել զանդոյն յառաջ բերիցեմ, որովք առաւել ինն բերրի երկիրն առնի:

Զի՞նչ ասիցեմ վասն պիտանութեան զաղբն արկանելոյ: Ասացի ի մատենին զոր զշինականութեան իրաց

գրեցի․ զորմէ Հեսիոդոս իմաստունն՝ եւ մի բան անգամ չասաց յորժամ զանդոյն գարմանոց գրեաց ։ Այլ Հոմերոս որ կանխագոյն բազում ժամանակօք էր[*], որպէս ինձ թուի, զԼայերտէս ի մէջ բերէ թէ վասն զորդւոյն անձուկն ցածուցանելոյ անդ եւ ագարակ արօրադիր առնէր եւ աղբ արկանէր[*] ։ Այլ ոչ հնձովք միայն եւ մարգօք եւ այգեստանեօք եւ գառաստանօք ուրախարար է շինականութիւն, այլ եւ բուրաստանօքն եւ մրգաբերօք, խաշանցն ճարակաւ, մեղուացն գնդակօք եւ ծաղկանցն ամենայնի գունակ գունակ կերպարանօք ։ Այլ ոչ տնկելն եւեթ ուրախ առնիցէ, այլ եւ պատուաստելն․ քան զոր չգտանիցէ ինչ մշակութիւնն եւս ճարտարութեան գործ ։

## ԺԷ.

Կարեմ բազում ինչ զբօսանս շինականութեան արդեանց մի ըստ միոջէ ասել․ բայց սակայն եւ զայն իսկ զոր ասացի, կարծեմ թէ երկայնագոյն ձգեցի․ այլ արգահատեսջիք զի եւ փութով արդեանց շինականացն յառաջադէմ եղէ եւ ծերացայ, եւ ծերութիւն իսկ ի բնէ շատախօս է․ զի մի ի կարծիս անկանիցիմ թէ յամենայն թերակատարութենէ ազատ առնիցեմ զծերութիւն ։

Արդ Մ․ Կուրիոս, որ զՍամնիտացիսն եւ զՍաբինացիս եւ զՊիւռոս յաղթեաց, զվերջին ժամանակս տիոցն յայս կեանս ծախեաց, զորոյ յորժամ զշէնն տեսանիցեմ, զի չէ ինչ կարի բացարձակ յինէն, չկարեմ բաւական զարմանալ ընդ ժուժկալութիւն առնն զլխովին եւ ընդ այնց ժամանակաց խրատն ։ Յորժամ Կուրեայ, մինչդեռ առ կրակարանի նստէր, մեծ կշիռ ոսկւոյ Սամնիտացիքն մատուցին, խոտեցան ի նմանէ ։ Զի ոչ եթէ զոսկին ունել, ասէ, երեւելի համարիմ, այլ այնոցիկ որ զոսկին ունիցին, իշխել ։

Իսկ արդ մարթիցի՞ այնպիսում ուրուք չառնել հեշտական զծերութիւնն ։ Բայց ի մշակն եկից, զի մի յանձնէ մեկնեցայց ։ Նա եւ ծերակոյտն այս ինքն որ ծերքն էին, յարտորայսն էին ։ Քանզի Լ․ Կոյնկտեայ Կինկինատեայ, յորժամ արօրադիրն առնէր, զոյց

համանէր թէ նա դիկտատոր եղեւ. որոյ հրամանաւ սպարապետ հեծելոցն Կ. Սերուիլիոս Ահալա զՍպ. Մելիոս, որ զթագաւորութիւնն բղձանայր, ի բաց առեալ սպանանէր: Ի շինէ անտի ի ծերակոյտ անդր կոչէին եւ Կուրիոս եւ այլ եւս ծերք, ուստի որ կոչէինն զնոսա վիատորս անուանեալ կոչէին, որ են ճանապարհորդք: Այ արդ միթէ եղո՞ւկ ինչ նոցա ծերութիւնն էր, որ զանդաստանաց զարմանովք զայլին: Իսկ ըստ իմոյ մտաց չգիտեմ թէ մարթիցի արդեւք եւս իմն երանելի կեանս գտանել. եւ ոչ միայն ըստ պաշտաճի պիտոյից, զի բնութիւն իսկ մարդկան ազգի կեցուցիչք են անդաստանայն զարմանք, այլ եւ ուրախութեամբ, զորմէ ասացի իսկ եւ զմայլութեամբ եւ ամենայն իրաց յաճախութեամբ, որ միանգամ ի դէպ առ կերակուր մարդկան եւ ի սպաս եւս դիցն իցեն, որպէս զի խօսիցիմք հաշտութիւն խաղաղութեան ընդ ցանկութեանն, քանզի եւ սոցա ոմանք բղձանան: Զի ցանդ իսկ եւ միշտ զեղուն շտեմարանք եւ մառանք գինւոյ եւ ձիթոյ, եւ համբարանոցք են ազնիւ եւ ժրագլուխ տեառն եւ ամենայն իսկ շէնն առատացեալ են, եւ ունին շատ խոզ, ուլն եւ ալոջ, գառն եւ որոջ եւ մարի եւ կաթն եւ պանիր եւ մեղր: Այլ զդրախտն ինքեանք իսկ մշակքն միւս եւս խոզենի աղծեալ ապխտեալ անուանեն: Այլ եւս իմն զեղեցիկս կազմութեամբ զայս ամենայն յարդարեն հաւորսացն եւ որսորդացն զբօսանք:

Զի՞նչ զջրամարդաց զալարութենէ կամ զծառոցն կարգաց կամ զայգեստանեաց կամ զձիթաստանեայն կերպարանաց ասիցեմ: Համառօտ հատից, կարճառօտ կարեցից: Քան զանդ որ քաջ զարմանեալ իցէ չմարթի այլում իմիք պարարտագոյն առ ի պէտս լինել եւ կերպարանօք զարդարուն, յորոյ ի վայելչութիւն ոչ միայն չարգելու ծերութիւն, այլ եւ հրաւիրէ եւս եւ հրապուրէ: Քանզի ո՞ր ուրեք ազնուագոյն մարթի այնմ հատակի կամ յարեւու կամ առ կրակի ջեռնուլ, կամ թէ միմեանց փոխանակաւ հովանեովք եւ ջրովք հովանալ, զի եւ այն կենաց պատճառք լինիցի: Արդ ունիցին ոմանք զզէնս, ոմանք զերիվարս, կէսք զանդան եւ զգեղարդունս եւ զաղեղնակապարճս եւ կէսք զցուպն,

ոմանք զգունդն, այլք զլողն եւ զարշաւանս, խաղ մեզ ծերոցս ի բազում խաղուց անտի զլեցս թողուցուն եւ զատակերոյլունս, սակայն եւ զայն թէ այնպէս կամք իցեն. քանզի եւ առանց այնր խաղ մարթի ծերութեանն երանելի լինել:

## ԺԷ.

Ի բազում իրս պիտանի են Քսենոփոնայ մատեանքն: Զորս ընթերցջիք աղաչեմ փութով յօժարութեամբ, որպէս եւ առնէք իսկ: Քանի յաճախագոյն յարգեալ գովիցի ի նմանէ մշակութիւն ի գիրսն, որ վասն տոհմային իրաց խնամակալութեան է, որ Իկոնոմիկոսն կոչի: Եւ զի առնուցուք ի միտ թէ ոչ մի ինչ նմա արքունական, քան զփոյթ զարման տանելոյ անդոյն թուիցի, Սոկրատէս յայնմ մատենի ընդ Կրիտոբուղայ ճառ արկեալ խօսի, թէ Կիւրոս կրսեր արքայ Պարսից, որ ընտիր էր իմաստութեամբ եւ փառօք իշխանութեան, յորժամ եկն առ նա Լիւսանդրոս ղակեդեմոնացի առաքինի այր ի Սարդիկացւոց քաղաքին եւ մատուցեալ տայր նմա պատարագս ի նիզակակցաց անտի. բազում իմն ընտանութիւն եւ մարդասիրութիւն առ Լիւսանդրոս արար, եւ անդաստանս ցանգով փակեալ եւ խնամով տնկեալ եցոյց: Իսկ իբրեւ զԼիւսանդրոս զարմանք կալան եւ ընդ բարձրաբերձ բարձրութիւն ծառոցն կարգեալ տողեալ հինգ հինգ, եւ ընդ հողն պեղեալ եւ սրբեալ, եւ ընդ հոտոյն անուշութիւն, որ ի ծաղկանցն բուրէր. ասէ թէ ոչ ընդ հաւատախն միայն կամ զարմացեալ, այլ եւ ընդ տեղեկութիւն այնր, յորմէ չափեալ եւ նկարեալ էն ծառքն. եւ ետ նմա Կիւրոս պատասխանի թէ զայդ ամենայն ես չափեցի. իմ են կարգքն, իմ նկարագիրն, եւ շատք եւս ի ծառոց այտի իմով իսկ ձեռամբ տնկեցան: Յայնժամ Լիւսանդրի նայեցեալ ընդ նորա ծիրանին եւ ընդ պաղպաջուն լուսաւորութիւնն եւ ընդ պարսիկ զարդն ոսկեհուռ ակնակապ, ասէ. Ուղիղ զքեզ երանելի պատմեն Կիւրէ, զի ընդ առաքինութեան քում եւ բախտ խառն է:

Այդ ի նմին բախտի համարձակութիւն է եւ ծերոց վայելել. եւ ոչ հատանին ինչ արգել լինելոյ առ չունելոյ փոյթ յանձին զերաց իրաց եւ մանաւանդ զանգոյ զար-ման տանելոյ մինչեւ ցյետին ժամանակ ծերութեանն : ԶԱՅՍ· Վաղերեայ Կորուեայ լսեմք ցհարիւրորդ ամն զկեանսն ձգեալ, որ զամենայն ժամանակս յանդաստանն կայր եւ նոյն գործան տանէր. եւ ընդ առաջին եւ ընդ վեցերորդ ընդեշխութիւնն քառասուն եւ վեց ամք ի միջի անցեալ էին: Որչափ ինչ ժամանակս տւոց առ սկիզբն ծերութեանն համարեցան մեր աւագքն, նոյնչափ ժա-մանակ էր պատուոյն նորա: Եւ վերջին հասակն նորա այնու եւս երանելի քան զմիջինն է, զի եւս աւելի ճո-խութիւն ունէր եւ խնջութիւն սակաւ: Իսկ կատարած ծերութեան ճոխութիւնն է: Որչափ ճոխութիւն ի Լ. Կեկիլեաւ Մետեղղոսն էր, քանի ինչ իշխանութիւն յԱտիլեաւ Կաղատինոս, յոր եւ բան գովութեանն է. թէ ԲԱԶՈՒՄ ԱԶԳՔ ԸՆԴ ՄԻՄԵԱՆՍ ՄԻԱԲԱՆԵՑԻՆ · ԹԷ ԱՌԱՋԻՆ ՆԻ-ԳԻՔՌԻՈՐ Է Ի ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԱՅՐՆ ·

Ծանօթ է ողջոյն իսկ երգն, որ ի շիրմին գրոշ-մեալ կայ: Արդ արժան յիրաւի ցածուն էր, զորոյ զգովութենէ ամենեցուն միաբան համբաւ էր: Որպիսի ոք այր զՊ. Կրասոս որ յառաջն մեծ քրմապետ էր, տեսաք, որպիսի ոք յետ այնորիկ զՄ. Լեպիդոս որ զնոյն քրմութիւն յանձն առ, նշմարեցաք: Զի զՊաւղ-ղոյ եւ զԱփրիկանեայ** յիշեցից, կամ թէ որպէս կանխա-գոյն իսկ ասացի զՄաքսիմեայ, յորոց ոչ միայն ի կամս մտացն, այլ եւ յակնարկելն ճոխութիւն երեւէր: Ունի ծերութիւն, մանաւանդ որ պատուական իցէ, այնչափ ինչ ճոխութիւն, զի այն նախամեծար իցէ քան զամե-նայն բերկրութիւն մանկութեան :

ԻԺ·

Բայց յուշ լիցի ձեզ թէ ամենեւին ի բնաւ իսկ ճառս զայն ծերութիւն յարգեմ, որ մանկութեանն հիմամբք հաստատեալ կայցէ. ուստի այն առնի, զոր ասացի իսկ, որում եւ ամենեքին համօրէն միաբան գոանին, թէ եղուկ այն ծերութիւն է, որ բանիւք

անձին պաշտպանիցէ ։ Ոչ ալեք, ոչ խորշոմ յանկարծակի փաղփաղակի զգերիշխանութիւնն մարթեն ի բաց հանել, այլ առաջին հասակն, որ պարկեշտութեամբ անցեալ իցէ, զվերջին առհմնականս արդեանց իշխանութեանն առնու ։

Բանզի եւ այնք խիկ մեծարանաց են, որ թե- թեւագոյնք կարծիցին, եւ հասարակաց իմն՝ ողջոյն տալ, մերձենալ, հրաժեշտ առնուլ, կանգնել, բերել, տանել, խորհուրդ հարցանել. որք եւ առ ի մէնջ եւ յայլ եւս քաղաքս, որ ազնուական բարս ունիցին, հաւատեա- կան պահին ։ Լիւսանդրոս զԼակեդեմոնացի, զորմէ այժմիկ յիշատակեցաք, ասեն թէ սովոր էր ասել այսպէս, եթէ Լակեդեմոնացւոց քաղաքն պարկեշտագոյն իմն բնակու- թիւն իցէ ծերոյն ։ Բանզի ոչ ուրեք այնչափ ինչ շնորհ է այնր հասակի, եւ ոչ ուրեք երբեք առաւել պատուա- կան է ծերութիւն ։ Զի եւ ի յիշատակարանս իմն կայ, թէ յորժամ յԱթենացւոց քաղաքի, ի խաղսն, եկն ծեր այր ի թատրն, եւ ի բազմամբոխ ժողովն չառաւ նմա տեղի ուրեք յիւրոց քաղաքացեաց անտի. իսկ իբրեւ առ Լակեդեմոնացիս մատեաւ, որ քանզի հրեշտակք էին, յառանձինն տեղւոջ առ միմեանս նստէին, ամենեքին յոտն կացին եւ զծերն առեալ նստուցին ։

Եւ իբրեւ ի հանօրէն ժողովոյ անտի բազմապատիկ կայթիւն եւ ծափիւն նոցա լինէր, ասէր ոմն ի նոցանէ, թէ Աթենացիք գիտեն որ ինչ ուղիղքն իցեն, բայց առ- նել չկամին ։ Գոյ բազում ինչ լուսաւոր եւ ի մերում աստ ժողովրդանոցիս, այլ առաւել այն խսկ զորմէ բանքս ճառին թէ որչափ յառաջ ոք մատչիցի տիօք, զայնչափ զկարծեաց եւ զմտաց զառաջին իշխանութիւնն ունիցի, եւ ոչ միայն քան զյառաջադէմն պատուովք, այլ եւ քան զայնոսիկ, որ յաւագ ինչ իշխանութիւնս իցեն, ծեր իղձքն նախամեծար համարին ։ Արդ զինչ ցանկու- թիւնքն իցեն մարմնոյ՝ յորժամ ընդ ձոխութեանն վար- ձուց համեմատեալ կշռիցին, եւ որ վարեցանն նոքօք, ինձ այսպէս թուին թէ պատրանս ինչ հասակի առնիցեն, եւ ոչ՝ իբրեւ զգուսանսն անվարժս զգոյշ լինիցին թէ մի ի վերջնումն վատթարեալ կործանիցին ։

Այլ գժնդակք իցեն եւ տաղտուկք եւ ցասկոտք ծերքն. թէ խուզիցեմք, եւ ագահք եւս եւ կծծիք ։ Այլ

այն ամենայն բարուց չարիք են, եւ ոչ ծերութեան: Սակայն եւ դժնդակութիւնն եւ չարիքն զորոց ասացի, ունին իմն չմեղադրութիւն, ոչ եթէ արդար ինչ, այլ որ թուիցի ընդունելի լինել: Արհամարհեալն իմն զանձինս համարին, անարգեալ, խաղ եւ կատականք եղեալ: Մանաւանդ զի ի տկար մարմնի ամենայն իսկ վիշտք աւելի են: Սակայն այն ամենայն քաղցր լինին բարուքն բարոյիւք եւ ճարտարացն արուեստիւք զոյգ եւ ի վարս եւ ի դուստանութեան գոյ հնար իմանալ յեղբարց անտի, որ յԱդեղփիսն [ԺԸ] իցեն: Որչափ ի միումն խստութիւն, եւ ի միւսումն մարդասիրութիւն: Այսպէս իսկ են իրքն: Զի զոր օրինակ ոչ ամենայն գինի, նոյնպէս եւ ոչ ամենայն հասակ հնացեալ բարկ լինիցի: Զսաստկութիւն ի ծերութեանն գովեմ, բայց եւ զայն, որպէս եւ զայլսն՝ համեմ. իսկ զդառն միտս ոչ երբեք: Իսկ կծծութիւն ծերոց բնաւ իսկ զի՞նչ յայտ կամիցի առնել, զայն չառնում ի միտ: Քանզի գուցէ ինչ արդեօք քան զայն անպատեհութեան, թէ որչափ սակաւ ուրուք ճանապարհ մնացեալ իցէ, զայնչափ եւս աւելի պաշար խնդրիցէ:

## ԺԹ.

Կան մնան եւ չորրորդ պատճառք. որ թուի թէ առաւելագոյն զմեր հասակս նեղեալ տագնապիցէ, մահուն մերձենալ. որում եւ չէ մարթ թէ կարի հեռի ի ծերութենէ իցէ: Ո՜հ թշուառական ծերոյն, որ յայնչափ երկայն տիս չառ ի միտ թէ պարտ է զմահ արհամարհել. զորմէ պարտ է անփոյթ իսկ առնել, թէ ամենեւին զմիտսն շիջուցանիցէ, եւ կամ ըղձանալ եւս թէ ի տեղի ինչ առաջնորդեսցէ նմա, ուր յաւիտենից լինելոց իցէ: Եւ մեւս ինչ երրորդ չիք հնար գտանելոյ:

Ես արդ զի՞ երկնչիցիմ թէ յետ մահուն կամ չիցեմ լինելոց եղուկ եւ կամ երանելի եւս: Զի եւ ո՞ այնչափ անմիտ ոք իցէ, թէպէտ եւ երիտասարդ եւս իցէ, որում յայտ իցէ թէ մինչեւ ցերեկոյ կայ կենդանի: Նա առանիկ այն հասակն եւս բազում քան զմերս՝ մահու պատահարս ունի: Յախտ դիւրաւ անկանին երիտասարդք,

ծանրագոյն խաւթանան, տրտմութեամբ զարմանիմ : Վասն որոյ եւ սակաւք իսկ հասանեն ի ծերութիւն. զի եթէ այնպիսի ինչ ոչ դիպէր, ազնուագոյն եւ իմաստնագոյն կեանս հասանէր կեալ : Քանզի միտք եւ հանճար եւ խորհուրդ ծերոց է. որք թէ չէին, չգոյին ամենեւին եւ քաղաքք : Այլ եկից այսրէն ի մահն հասեալ ի վերայ : Զի՞նչ այն մեծ իցէ ծերութեան, յորում զնոյն ընդ երիտասարդութեան հասարակ տեսանիցէք :

Առի ես ի միտ ի բարուք որդեակն իմ եւ ի պատուական եղբարս քո, Սկիպիոն, թէ հասարակաց ամենայն հասակաց է մահ : Այլ ակն ունի, ասեն, երիտասարդն թէ ընդ երկար կեցցէ. իսկ ծերն չմարթի նմին ակն ունել : Անմտութեամբ ակն ունի : Քանզի զի՞նչ քան զայն անհանճարագոյն կայցէ, զանյայտն առ յայտնիս ունել, զվրիպականն առ ճշմարիտս : Դարձեալ ծերն, ասեն, չունի ինչ որում ունիցի ակն : Այլ նովիմբ քան զերիտասարդն՝ եւս ազնուագոյն է. զի յայն ինչ զոր նայն յուսայ, սա եհաս : Նա ընդերկար կամի կեալ, եւ սա երկարագոյն եկեաց : Թէպէտ ո՞ր այն երկարագոյն կեանք իցեն ի կեանս մարդկան :

Նայեցուք ընդ տիս Տարտեսիացւոց թագաւորին. քանզի եղեւ իսկ, որպէս եւ տեսանեմ գրեալ, ոմն Արգանթոնիոս ի Գադս, որ ութսուն ամս թագաւորեաց, հարիւր եւ քսան ամ եկեաց : Այլ ինձ ոչ մի ինչ երկարագոյն թուի, յորում գոյ ինչ սպառուած : Զի յորժամ վախճան հասանիցէ, յայնժամ եւ այն ամենայն, որ անց, սահեալ գնայցէ. այն միայն կայ, զոր առաքինութեամբ եւ ուղղութեամբ գործովք հասեալ իցես : Գնան ժամք եւ աւուրք եւ ամիսք եւ տարիք. ոչ անցեալ ժամանակն երբեք դառնայ այսրէն. եւ ոչ թէ զինչ զհետն գայցէ, մարթիցի գիտել : Ում զինչ ժամանակ կենդանութեան տուեալ է, նովիմբ պարտի շատանալ :

Քանզի եւ ոչ գուսանին արժան է զառասպելն կատարեալ հանել ի գլուխ, զի հաճոյ լինիցի, միայն թէ յոր գործ եւ լեալ իցէ՝ ընտիր գտանիցի. եւ ոչ իմաստնոյ հարկ է մինչեւ ցկայթելն եւ ցորոտել կեալ : Զի կարճ ժամանակ տիոյն, երկայն է բաւականութեամբ առ

բարւոքն եւ զգաստութեամբ կեանս կեցեալ : Ապա թէ երկայնագոյնս յառաջ մատչիցիս, ոչ աւելի ինչ պարտիս տրտմել քան որչափ մշակք տրտմիցին, ընդ հասանել ամարայն եւ աշնայնոյ՝ ի գարնայնւոյն քաղցրութեան ժամանակին անցանել : Քանզի գարունն զերիտասարդութիւն իմն նշանակէ եւ զհանդերձեալ մրգոյն յայտ առնէ, իսկ այլ եւս ժամանակք զարգիւնսն հնձելոյ եւ ժողովելոյ պատշաճեցան :

Իսկ պտուղ ծերութեանն, որպէս բազում անգամ ասացի, յառաջագոյն ծնելոց բարութեանց յիշատակն եւ յաճախութիւն է : Զամենայն ինչ, որ ըստ բնութեանն լինիցին առ բարւոքս պարտ է ունել : Իսկ զի՞նչ ինչ այնպէս ըստ բնութեան իցէ, որպէս ծերոց մեռանել . քանզի նոյն եւ երիտասարդաց դիպի, թէպէտ եւ բնութիւն ընդդէմ դարձեալ կռուիցի : Վասն որոյ ինձ թուի թէ այնպէս մեռանիցին երիտասարդք, զոր օրինակ յորժամ ի ջրոյն բազմութենէ սաստկութիւն բոցոյն բորբոքելոց պարտեալ գտանիցի . այլ ծերք իբրեւ իւրովի իւրեանց կամօք առանց իրիք բռնութեան լինելոյ, սպառեալ հրոյն մեռանին : Եւ որպէս միրգք ի ծառոց թէ խակ իցեն, բռնութեամբ քաղին, եթէ հասեալ եւ եփեալ, անկանին . ըստ նմին օրինակի եւ զկեանս երիտասարդացն բռնութիւն ի բաց քաղէ, իսկ զծերոցն՝ հասանելն . որ եւ ինձ այնչափ քաղցր եւ հեշտական է, զի որչափ մօտագոյնս ի մահ անդր մատչիցիմ, իբրեւ զցամաք տեսանել համարիցիմ, եւ թէ յերկայն նաւարկութենէ երբեմն ի նաւահանգիստ հասանելոց եմ :

Ի

Ամենայն հասակաց է ինչ կատարած սահմանեալ, այլ ծերութեան չիք ինչ կատարած սահմանեալ . եւ ի նմա հասանէ կեալ ուղիղ, զորքան ժամանակս զգործ արուեստն մարթիցես ի գլուխ հանել եւ վճարել . սակայն զմահ պարտ է արհամարհել : Որով առնի զի եւ ծերութիւն առաքինագոյն քան զերիտասարդութիւն իցէ եւ ուժգնագոյն: Այս այն է, որ Պիսիստրատոյ բռնաւորի առ ի Սողոնէ տուաւ պատասխանի, զի ի հարցանել նո-

րա ցՍողոն թէ յոր յոյս ապաստան այնպէս յանդգնեալ նմա ընդդէմ դառնայցէ, ասի թէ նա պատասխանի եթէ ի ծերութիւն: Այլ կենաց բարւոք վախճան այն է, յորժամ ողջ միտքն իցեն եւ այլ եւս զգայունք, եւ ինքն զիւր գործ, որ միախառնուն ի մի վայր գումարեաց յօդեաց բնութիւնն, քակեսցէ: Զոր օրինակ զնաւ կամ զշինուած ինչ նոյն դիւրաւ քայքայէ, որ կազմեացն, նոյնպէս զմարդն նոյն բնութիւն որ յօդեացն, աղուագոյն քակէ: Զի ամենայն զօդ մինչ դեռ նորն իցէ, դժուարաւ խախտի, եւ յորժամ հնասցի դիւրաւ: Այսպէս ոչ այնմ դոյզն մնացելոյ կենդանութեանն արժան է ծերոց սաստիկ ցանկանալ եւ ոչ առանց պատճառանաց յանձանց մերժել:

Եւ Պիւթագորաս արգելու առանց իշխանին հրաման տալոյ, այն իսկ է Աստուծոյ ի պահպանութենէ եւ ի կայից կենդանութեան ի բաց գնալ: Կայ իսկ արձանագիր Սողոնի իմաստնոյ, յորում յայտ առնէ թէ չկամի թէ առանց ցաւոց եւ հեծութեան բարեկամացն իցէ մահ իւր: Գիտեմ թէ սիրելի իւրոցն կամի լինել. այլ զայն ինչ ոչ գիտեմ թէ աղուագոյն ինչ արգելուք Էննիոս.

ՄԻ ՈՔ ԶԻՍ ԱՐՏԱՍՈՒԱՒՔ ԶԱՐԴԱՐԻՑԷ · ԵՒ ՄԻ ՑՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՈՂԲՈՎՔ ԱՌՆԻՑԷ·

Զհամարի աշխարանաց զմահն, զորոյ զհետ գայցէ անմահութիւն: Զի եթէ իցէ ինչ զգայութիւն մեռանելոյ, այն առ սակաւ մի ժամանակ է, մանաւանդ ծերոյն. իսկ յետ մահուն զգայութիւնն կամ ցանկալի է եւ կամ ոչ ինչ իսկ: Այլ զայս յերիտասարդութենէ պարտ է ածել զմտաւ, զի զմահուանէ անփոյթ առնիցեմք. քանզի առանց զայդ զմտաւ ածելոյ, չեք ումեք հնար հանդարտ մտօք լինել: Զի արդարեւ կայ մեռանել, այլ այն չէ յայտ թէ արդեւք ի նմին իսկ աւուր: Արդ ո՞ ոք որ ի մահուանէն որ յամենայն ժամ ի վերայ կայ, երկնչիցի եւ կարիցէ մտօք կալ ի հաստի: Զորմէ թուի թէ չէն ինչ պէտք այնպէս երկայն վճռելոյ, յորժամ յիշեցեմ ոչ միայն զԼ. Բրուտոս, որ ի զաշխարհն ազատել սպանաւ, ոչ զերկուս Դակիոսն որք ի կամաւոր մահն զերիվարացն արշաւանս մղեալ դիմեցուցին. ոչ զՄ. Ատիլիոս որ ի տանջանս դիմեաց, զի զուխտն զոր ընդ թշնա-

միայն եղ՝ պահեցաւ, ոչ զԱկվիլինան երկոսեան որ իւրեանց իսկ անձամբք եղին զճանապարհ գալոյ Պենայւոյն. ոչ ըղհաւնքոզ զԿ. Պաւղոս, որ մահուամբն եւ այժմ զմարհութեան ընկերին ի Կաննէսեայ թշնամանան. ոչ զՄ. Մարկեղոս, զի եւ ոչ անարգոյն թշնամին առ յանձն թէ ի թաղելոյն պատուոյ զրկեսցէ զիակն, այլ զգունդս զօրացն զորոց ի Սկիպեանցն զիրս գրեցի, որք բազում անգամ զուարճացեալ մտօք եւ յօժարութեամբ յայն փայլ դիմեն, ուստի չհամարեցին եթէ դառնայցեն այսրէն: Այարդ զոր երիտասարդք, եւ այնք ոչ միայն այլեւք եւ խաւք, այլ եւ չինականք արհամարհեն. երկեցի՞ն ինչ յայնմանէ ծերք զխաւնք: Ամենեւին որպէս ինչ ինձ թուի, ամենայն փութով ջանից յագել. այս յագել կենօքն: Են հրահանգք որոշեալք մանկութեան. արդ միթէ ցանկա՞ն ինչ ընդ նոսա երիտասարդք: Են եւ մատաղ երիտասարդութեան. միթէ խնդրէ՞ ինչ զնոսա հաստատուն հասակն, որ միջինն կոչի: Են եւ այնր հասակի, բայց եւ ոչ նոյնք ի ծերութենէ խնդրին: Են եւ յետին ինչ հրահանգք ծերութեան. արդ զոր օրինակ առաջին տիոցն ջանք անկանին, նոյնպէս եւ ծերութեանն անկանի ջանն: Այլ իբրեւ այն լինիցի, յագել կենօք՝ զհասեալ ժամանակ մահուն ի վերայ ածիցէ:

## ԻԸ.

Արդարեւ չառնում ի միտ թէ ընդէ՞ր զինչ ինքնին զմահուանէ իմանայցեմ, չիշխիցեմ ձեզ ասել. զի այնչափ այնուադոյն թուի ինձ նշմարել, որչափ ի մահ անդր մօտիցեմ: Այլ զձեր հարս, Պ. Սկիպիոն եւ Կ. Լելի, զորս երեւելիս եւ զիմ բարեկամս այսպէս համարիմ թէ կենդանի են, եւ զայն կեանս կեան, զոր միայն պարտ է կեանս կոչել: Զի մինչդեռ ի մարմնոյ պարաւանդս կապեալ արգելեալ կայցեմք, սպաս ինչ հարկի եւ գործ ծանր վճարեմք: Քանզի են միտք երկնաւորք ի բարձրաբերձ բնակութենէ կործանեալ եւ ընկղմեալ իմն յերկիր ի տեղի որ աստուածեղէն բնութեանն եւ մշտնջենաւորութեանն հակառակ է: Այլ թուի ինձ, զիցն անմահից զոգիսն ի մարմինս մարդկեղէնս սփռել, զի իցեն որք զեր-

կէր զարմանիցեն, եւ ընդ երկնաւորացն կարգ հայեցեալ՝ նմանօղ այնմ լինիցին գնացիւք եւ հաստատուն մտօք։ Եւ զիս ոչ միայն միտք եւ բանից հակառակութիւն հաւանեցոյց զի այնպէս համարիցիմ, այլ եւ ազնուականութիւն եւս ճարտարապետաց փիլիսոփայիցն եւ ճոխութիւնն։

Լսէի զՊիւթագորայ եւ զՊիւթագորայցն գրեթէ զմեր իսկ՝ բնակչաց, որք իտալական փիլիսոփայքն երբեմն անուանեալ կոչէին, թէ ընդ այս չէին երկմիտ թէ չունիցիմք միտս ի համօրէն աստուածեղէն մտացն հեղեալ։ Եւ անցանէր զարձեալ առաջի իմ ի հանդիսի, զոր Սոկրատէսն ի վերջնում աւուր կենացն զրուցոյն անմահութենէ ճառէր, այն՝ որ քան զամենեսեան իմաստնագոյն Ապողոնեայ հրամանաւ համարեցաւ[*]։ Զի՞ իսկ յաճախիցեմ խօսել։ Այսպէս եղի ի մտի իմում, սոյնպէս իմանամ, թէ յորժամ այնչափ երագութիւն մտացն իցէ, այնչափ յիշատակք անցից անցելոց, եւ առ յապա լինելոց իրաց հանդերձելոց իմաստութիւն, այնքան ճարտարութիւնք, այնչափ գիտութիւնք, զայնչափ հնարագիտութիւնք, չէ մարթ այնր բնութեան որ զերան զայնոսիկ ունիցի, մահկանացու լինել։ Եւ զի հանապազ յուզէն եւ շարժին միտք եւ չունի սկիզբն շարժմանն, քանզի ինքն զինքն շարժէ, առնում ի միտ թէ չունիցի կատարած շարժմանն, քանզի ոչ եթէ ինքն զինքն երբեք թողուցու։ Եւ զի պարզական եւ սուզական բնութիւն է ոգւոյն, եւ չունի ինչ յինքեան խառնուած որ ոչ իւր զուգական իցէ եւ նման, չէ մարթ նմին բաժանել, եւ եթէ այնմ չիցէ հնար, ապա եւ ոչ հնար գոյ կորընչելոյ։ Մեծ իմն յանդիմանութիւն է մարդկան բազում ինչ, մինչ չեւ իցեն ծնեալ, գիտելոյ, զի ի մանկութեան յորժամ արուեստս ինչ զժուարինս ուսանիցեն, այնպէս արագ արագ անհամար իրս առնուն ի միտ, զի ոչ յայնժամ զառաջինն թուին թէ ընդունիցին, այլ թէ յիշեցեն իմն եւ զմտաւ ածիցեն։ Այս ամենայն Պղատոնեայ է։ Իսկ առ Քսենոփոնեայ Կիւրոս մեծ ի մեռանել իրում այսպէս բան սոյն բանից բարբառիցի։

Մի համարիք, որդեակք սիրելիք, թէ ես յորժամ ի ձէնջ մեկնեցայց ոչ ուրեք լինիցիմ կամ չիցեմ բնաւ ամե-

նուին։ Ջանզի եւ ոչ մինչդեռ ընդ ձեզն իսկ էի՝ զիմ ոգին տեսանէիք. այլ թէ է ի մարմնի աստ, յայնց իրաց զոր գործէի, իմանայիք։ Արդ համարեսջիք թէ է նոյն, թէպէտ եւ տեսանիցէք ոչ։

Ոչ ի եւ ոչ արանց երեւելեաց յետ մահուն մնայր պատիւն, թէ ոչ նոցուն իսկ ոգիքն ազդէինն ինչ որով երկարագոյն զյիշատակս ունէաք ի մեզ։ Ինձ չեղեւ հնար առնուլ յանձն, թէ ոգիքն մինչդեռ ի մահկանացու մարմինս իցեն, կեցցեն. եւ իբրեւ ի նոցանէ ելանիցեն, մեռանիցին. եւ ոչ թէ յայնժամ ոգիքն անիմաստագոյնք լինիցին, յորժամ յանիմաստ մարմնոյ ի բաց սրանայցեն, այլ թէ յորժամ յամենայն մարմնոյ խառնուածոյ զերծեալ՝ սուրբ եւ յստակ եւ ողջ սկսանիցի լինել, յայնժամ լինիցի իմաստուն։ Եւս՝ յորժամ մարդոյ բնութիւն մահուամբ լուծանիցի, յայտնի է թէ յո ուրեք իւրաքանչիւր յայլոց իրաց մեկնեալ գնայցէ, քանզի ամենայն ինչ անդր գնայ, ուստի եղ. իսկ ոգին միայն՝ ոչ յորժամ մօտ իցէ, եւ ոչ յորժամ հեռի, երեւի։ Եւ տեսանէք թէ նման ինչ այսպէս մահու չիք, որպէս զքուն։

Այլ ոգիք այնոցիկ որք ննջիցենն առաւել զիւրեանց ազնուականութիւն յայտ առնիցեն։ Ջանզի յորժամ արձակեալք եւ զերծեալք են բազում ինչ իրս յառաջագոյն նշմարեն, թէ առ յապա լինելոց է, որով իմանի թէ որպիսիք ոք լինելոց իցեն յորժամ ամենեւին ի մարմնոյն կապանաց զանձինս քակիցեն։ Վասն որոյ թէ այդ այդպէս իցէ, իբրեւ դիցն այնպէս զի՛ք ինձ մեծարանս։ Ապա եթէ միանգամայն ոգիքն ընդ մարմնոյ կորնչելոց իցեն, սակայն ձեր զդիս մեծարեալ որք զայս ամենայն գեղեցկութիւն դարմանեն եւ վարեն, զմեր յիշատակս դիւցապաշտութեամբ եւ անարատ պահեսջիք։ Այսպէս զոյն ձեւ Կիւրոս ի մեռանելն իւրում. իսկ եթէ հաճոյ թուեսցի, մեք զմերս տեսցուք։

Ոչ ոք զիս, Սկիպիոն, հաւանեցուցէ թէ քո հայրն Պաւղոս կամ երկու հաւքն Պաւղոս եւ Ափրիկանոս կամ Ափրիկանեայ հայրն կամ հօրեղբայր կամ բազում այլք ընտիրք, զորս չէ հարկ մի ըստ միոջէ թուել, այնչափ ինչ ջանացին վասն յիշատակ յետնոցն թողլոյ, թէ ոչ մտօք նկատէին թէ ունին իմն հաղորդութիւն ընդ

նոսա յետինքն։ Եւ զինէն իսկ իւիք ըստ ծերոցն սովորութեան պարծեցայց. համարիցիս թէ ես զայնչափ վաստակս զցերեկութեան եւ զցայգութեան աւանին եւ ի պատերազմի առնուցում յանձն, թէ որով վախճանաւ զկեանս հանիցեմ ի գլուխ՝ նովին եւ զպարծանս։ Ոչ ապաքէն յոյժ իսկ լաւ էր դատարկութեան տիս եւ հանգստեան կեանս առանց իրիք աշխատութեան կամ ճգնութեան վարել։ Այլ չգիտեմ զիարդ եւ որով օրինակաւ միտք իմ զանձն քաջալերեալ՝ այնպէս զյետինսն հանապազ յառաջագոյն նշմարէր, որպէս թէ յորժամ ի կենացն մերժեսցի, յայնժամ կեցցէ։ Զի եթէ ոգիքն չէին անմահ, ոչ առաքինեացն միտք առաւել յանմահ փառաւորութիւնն փութային։

Զի՞ է, զի իմաստունք հանդարտութեան մտօք մեռանին, իսկ անմիտք մտօք խռովելովք։ Ոչ իսկ թըւիցի ձեզ, եթէ միտք, որ առաւելն նկատիցէ եւ բազագոյն, տեսանէ զի ի լաւագոյնսն յառաջեալ ընթանայ, եւ թէ այն միտք որ շլագոյն աչք իցեն, ոչ տեսանեն։ Արդարեւ յոյժ իսկ անձկացեալ եմ տեսանել զհարսն ձեր, որոց սպաս հարի եւ սիրեցի. եւ ոչ առ նոսա միայն ցանկամ երթալ, զորս ես իսկ ծանեայ, այլ եւ առ այնոսիկ զորոց լուայն եւ ընթերցայ եւ ինքնին իսկ գրեցի ի մատեանս։ Իսկ զիս որ անդր յառաջեալ իցեմ, ոչ դիւրաւ այսրէն ոք յետս ձգիցէ եւ ոչ իբրեւ զՊեղեաս միւսանգամ եփեսցէ[*], եւ եթէ ոք ինձ ի դիցն շնորհէր, զի յայսմ հասակէ միւսանգամ մանկացայց եւ ի խանձարուրս պատեցայց, չառնուի յանձն. զի ոչ կամիմ յետ ընդ անջրպետութիւնն ընթանալոյ միւսանգամ յարգելան անդր դառնալ։

Քանզի զի՞նչ դիւրութիւն կեանքս ունիցին, մանաւանդ թէ զո՞ր աշխատութիւն ոչ։ Այլ թէ ունիցի եւս ինչ, սակայն ունի կամ զյագեալն կամ զչափն։ Զի ինձ չէ հաճոյ զկեանս աշխարել, զոր բազումք բազում անգամ եւ նոքին գիտունքն արարին։ Եւ ոչ զղջանամ ինչ ընդ կեալս, քանզի այնպէս կեանս կեցի, մինչ զի չհամարիցիմ զինէն թէ զուր եւ ընդ վայր ծնայ, եւ այնպէս մեկնիմ ի կենաց աստի, որպէս յասպնջականութենէ եւ ոչ իբրեւ ի տանէ։ Քանզի ագանելոյ իջավան ետ մեզ բնութիւնն եւ ոչ բնակելոյ։

Ո՜հ մեծապայծառ աւուրն, յորժամ երթայցեմ յայն ժողով և ի ջոկ ոգւոցն աստուածեղինաց, և ի խառնակութենէ աստի և յաղմկէ մերժեցայց: Քանզի երթայց ոչ միայն առ արսն այնոսիկ զորոց կանխագոյն ճառեցի, այլ և առ Կատոն եւս քան զոր չիք ոք այր լաւագոյն և քաջութեամբ ազնուագոյն. որոյ մարմինն յինէն այրեցաւ, ուր պարտ իսկ էր իմոյ զիմոյն ի նմանէ այրել: Իսկ ոգիքն յայն վայր երթեալ հասին յոր վայր և ինձ համարէր գնալ, և ոչ եթէ թողեալ ինչ զիս, այլ ինձ դէտ ակն ունէին: Եւ ես այսպէս իսկ երեւէի թէ արութեամբ քաջութեամբ աղետին համբերէի. իբր ոչ եթէ զի անխռով էի, այլ զի ինքնին անձին մխիթար լինէի, զմտաածեալ թէ ոչ երկայն ինչ ընդ նա և ընդ իս խտրոց և անջրպետութիւն ի միջի կայ:

Այսու ամենայնիւ Սկիպիոն, թեթեւ է ինձ ծերութիւն, և ոչ միայն ծանր և տաղտուկ ոչ, այլ և հեշտական եւս. զի տայցեր զքէն թէ ընդ այն իսկ սովոր ես Գեղեաւ հանդերձ զարմանալ: Քանզի եթէ այնու իմն մոլորեցիմ զի զմարդկան ոգիս անմահս համարիմ, յօժարագոյն մոլորիմ. և ոչ, մինչ դեռ կենդանիս եմ, կամիմ թէ այն մոլորութիւն՝ ընդ որ խնդամս, մերժեսցի յինէն: Ապա եթէ յորժամ մեռանիցիմ ոչ իմիք զգայցեմ, որպէս փիլիսոփայք ոմանք անհանճարագոյնք ասեն, ոչ ինչ զանգիտեմ թէ մի զայդու մոլորութեամբ իմով ծիծաղեսցին փիլիսոփայքն մեռեալք: Զի թէպէտ և անմահք եւս չիցեմք լինելոց, սակայն մարդոյ ի ժամանակի իւրում վախճանել ցանկալի է: Զի որպէս այլոց ամենայն իրաց, նոյնպէս և կենաց ունի չափ բնութիւնն: Իսկ ծերութիւն վախճան տիոցն է, իբրև դուսանական առասպելին. յորոյ աշխատութենէ և ի տաղտկութենէ պարտիմք փախչել, մանաւանդ թէ և յագել եւս հասանիցէ: Զայս ունէի զծերութենէ ասել. երանի թէ և յայն հասանիցէք, զի զայնոցիկ՝ զորս յինէն լուայք, զչափ առնուլ մարթայցէք:

# ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Ա. Յիսուս պսակեալ է այստ։ Զսա ի Սարգսեանցս աշխարհէն Մարկոս Պորտիոս Կատոն տարաւ ի Հռոմ քաղաք. վիպասանութեան երգոց Հոռոմայեցւոց եղեւ առաջնորդ, որպէս խոկգրան տուեալ զականն վիճմանց գրոցն Տուզզի յայս առնէ, զորս եւ զմատեանն ի ձեռն առեալ Վերգիլեայ եւ հարցեալ թէ զի՞նչ գործիցէ, եա պատասխանի թէ ակնա պատուականս ժողովեմ՝ Թուէպէս եւ ոչ եթէ յղկեալ ողորկեալ ինչ որպէս այլոց ճարտարացն որ յետոյ քան զնա եղեն, երգքն իցեն, զՎիրգիլեայ եւ զՈրատեայ ասեմ եւ յետ նոցա զՕվիդեայն Նասոնի։ Զյիսնեայ այսպիսի ինչ առէ Կուինտիլիանոս։ Մեծարանս զնեմք Յիսնեայ, որպէս վասն հնութեանն մեհենական անտառացն յորս ոչ եթէ առաւել ինչ կերպարանաց այնչափ գեղեցիկ՝ յաղթ եւ հին կաղնիքն ունիցին, որչափ մեծ առաջեն երկիւղածութեան։

Բ. Յեւրիպիդեայ է բանս։

Գ. Այս Պղատոնի է յԱրիստոբին. առէ պղղոյն եւ Մենեկրատէս առ Սոսրեայ։

Դ. Զհակայից ընդ գից ամայեաց մարտ պատերազմի Եսիոդոս ճառէ ի գիցն ծննդեան. եւ Վիրգիլիոս յառաջնում գեորգիկոնին յիշատակէ. Ովիդիոս յԱ. Դ. Կղաւդիոս յԱ. Մակրոբիոս յԱ. Զրուցան. Ի։ Եւ առապելեկին այսպէս. Սկայքն զարմ եւ զաւակ Տիտանանցն յերկրէ բուսեալ ծնեալ հաւճկուքն յաղթանդամքն մեծարերձք հասակաւ եւ վիշապոտունք. ի գիցն ատելութեան, զի ճակատեալ ասպէն ընդ գիցն մարտ պատերազմի եւ զՈրմիզդ յերկնից թագաւորութենէ իջուցանիցեն։ Այնուհետեւ ձեռն ի գործ արարեալ Տիտանանցն լերինս եւ բլուրս զմիմեամբք ի միմեանց վերայ յարեալ յաւելուին, յՈղիմպեայ վերայ զՈսսայն եւ յՕսսայ վերայ զՊելեոնն եւ ընդ Արամազդայ մարտ եղեալ կամէին. իսկ Եփիալտոս եւ Կիկղոպայքն չանթս հրացանս նետեալ ի կուռս գիցն լինէին, որոց արուեստանոց Եսթնա էր ի Սիկիլիացւոց աշխարհին. արդ նորա հարկեալ խափշտակել ակայիցն տատակէին։

Ե. Լիւիոս Սալինատոր ատենական էր Տարենտացւոց միջնաբերդին, եւ պատմէ զայս Պողիբիոս յութերորդումն։

Զ. Այս Հոմերոսի է։

Է. Վոկոնեան օրէնք այն էին, զի մի որ զկին մարդ ժառանգ կացուցանիցէ. որպէս յայտ առնէ Կիկերոն ի ճառին որ վասն Բալբեայ է ի Վերէս. եւ Գելղիոս, Զ, եւ Փլորոս ի համառօտ պատմութեանն ԽԱ։

Ը. Այս ինքն Ագամեմնոն, Հոմերոս յԻղիա. յերկրորդումն։

Թ. Պատմէ զՄիդասէ եւ Պլինիոս Ի. Սողինոս, Դ. եւ զմահուանէն պատմէ Գելղիոս ԺԶ. Թ. եւ Սոտարոն։

Ժ. Կատոն ի ծերութեանն բուռն հար զրել պատմութիւն եւ էին գայրութիւնք պատմութեանց չորք. յերկրորդումն եւ յերրորդումն ճառէ թէ ուստի իւրաքանչիւր յիտալացւոց քաղաքացն առ ակիզբն. եւ վասն այնորիկ կոչին Սկզբանց գիրք։ Բայց այսց գրոց այժմ հատակտորք միայն կան։

ԺԱ. Եպիկուրոս է որ կատարած լաւութեանց զցանկութիւն զնէր. տարաաշակերտք ընդ երկուս ճեղքեցան. քանզի կէսք իմացանէ զեղծեցան բանիւք վարդապետին իւրեանց. զի զցանկութիւնն ոչ եթէ որպէս Եպիկուրոս խմանայր՝ իմացան, այլ զկերակրոյ եւ զըմպելեաց. քանզի Եպիկուրոս զբերկրութենէն իմացաւ որ յառաքինութեանցն ծնանիցի։ Նորոց չարաչարն իմացան զխրատ որ կատիա է զորմէ Կիկերոնն եւ Հորատիոս եւ Կուինտիլիանոս յիշատակեն։

ԺԲ. Պղատոն ի Տիմէին։

ԺԳ. Տորքեայն Ամիլիոս խաղալիկ էր զուարճական խաղուց ի տիս Տերենտեայ։ Իսկ զարանն զլռաժանեալ տեղեացն թատերն յայտ առնէ. զի ի Հռոմ թատրն յերիս զարանս բաժանէր ի վերին եւ ի միջին եւ ի վերջին։ Ի վերջնումն էր տեղի կարաւելոյն եւ արջաւելոյ երիւարացն, եւ քանզի չորեքտասան աշտիճանք էին, պատուականագոյն այն էր որ մօտ յառաջն էր. եւ տեղի նստելոյ ծերակուտականացն կարաւելոյ տեղին էր, որ կոչի Որքեստրա, եւ առ նմին կայր տեղի երիւարացն արշաւելոյ։ Իսկ ամբոխ ռամիկն ի միջնումն եւ ի վերջնումն կայր. այլ յետոյ պատուականագոյն միջինն համարեցաւ, զի արգել Ռոսկիոս կանանց եւ որոց ի թուխս իցեն համակեալ անդ նստել։

ԺԴ. Տրակողեդոսն եւ Փուլեզոզոն անուանք են զուարճական խաղուց։

ԺԵ. Զայն հաստատիմ առնէ եւ Գելղիոս ԺԱ եւ ԺԷ. ԳԼ. ԻԱ. եւ Պլինիոս Է. եւ Սողինոս ԾԵ եւ Վեղղէոս Պատերկուղոս Ա. եւ Դիոն Ոսկիբերան։

ԺԶ. Համերոս յՈդիսականին ի կատարած կոյս։

ԺԷ. Զի Պաւղոս Հայր էր բնութեամբ Սկիպիոնեայ եւ Ափրիկանոս պատուատիւ, որպէս Լիւիոս պատմէ։

ԺԸ. Ադեղփիք նշանակեն ի յոյն լեզու Եղբարք. որպէս թէ Ոչ մի միայն. քանզի Դեղփոն ի Հին լեզու Յունաց Մի միայն նշանակէ. ուստի եւ Ապողոն այս ինքն արեգակն, Դեղփեան կոչեցի։ Իսկ զարեգակն եւ Հռովմայեցիք Սող անուանեն, որ ի Սողոս մօտ է եւ թարգմանի Հայերէն Միայն։ Ուստի եւ Տերենտիոս զզուարճական խաղն յորում երկու եղբարք ի մէջ գան, Ադեղփիս կոչեաց։

ԺԹ. Հերոդոտոս պատմէ զամանէ։

Ի. Պիւթագորաս եւ Պիւթագորականքն ի միում կողման Իտալիայոյ աշխարհին բնակէին որ մեծ Յունաց աշխարհն կոչէր։

ԻԱ. Էր պատգամ պատասխանութիւն այսպէս. Իմաստուն է Սոփոկլէս, եւս իմաստնագոյն Եւրիպիդէս, եւ քան զամենեսին իմաստնագոյն Սոկրատէս։

ԻԲ. Մեդէա դուստր էր Այէտեայ Կողքիսայ արքային, որ զգեղմն ոսկի պահէր. եւ բազում ինչ զնմանէ յօդեցին պատմէր. սա եւ պատճառ Յասոնեայ Թեսաղացւոց թագաւորի որ գլխաւոր էր արգիական նաւորդացն զգեղմն գողանալ եւ այսպէս ինքն եւս անկեալ զհետ նորա գնայր. եւ իբրեւ եկեալ թէ սպանեալ զհետ նորա Հայրն, զի որ եղբայրն զԱբսիրտոս յօշէր, զի խափանեսցէ զՀայրն ժողովել զանդամս որդեկին։ Իսկ ինքն եկեալ Հասեալ ի Թեսաղիա գործոյ ի մանկութիւն զծեր Թագաւորն զԷսոն զՀայր Յասոնեայ. եւ առ խնդրելոյ զմեծ ի Պելիայ ի Հօրն եղբօրէ, առ ի Հաւան զորդիսն Պելիայ զի փողատեսցեն զՊելիաս զՀայրն անդամ անդամ յօշեսցեն եւ առցեն եփել զի մատաղացեալ մանկասցի։ Զամենայն պատմէ Ապողոդորոս ի մատենին, եւ Վաղերիոս Փղակկոս։